# Ազգ
Azg

20-26 ՄԱՐՏ 2026 ՈՒՐԲԱԹ 010(5878)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## «Շվեյցարիան պետք է ակտիվորեն ներգրավվի բնիկ ժողովուրդների եւ նրանց ինքնորոշման իրավունքի պաշտպանության գործում»




Մարտի 18-ի առավոտյան արդեն հայաստանյան առցանց ԶԼՄ-ները՝ դրանց թվում նաեւ azg.am-ը տարածել էին **Վարդան Ոսկանյանի** ֆբ-ի գրառումը՝ հրազեկելով, որ Շվեյցարիայում SOCAR-ի դեմ հայց է ներկայացվել՝ էթնիկ զտումները ֆինանսավորելու հիմքով:

➪2

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

# Իսկ ո՞վ է բռնելու վախկոտի վախը

Վախը մարդկային ու կենդանական աշխարհի բնական, բնազդային երեւույթներից է, անմիջականորեն կապված՝ ինքնապաշտպանության բնազդի հետ, ինքնապահպանության ու գոյատեւման կենսական ցանկության հետ:

Մարդիկ, ինչպես նաեւ կենդանիները, վախենում են տարերային աղետներից, վթարներից, թշնամական հարձակումներից, եւ փորձում են, հաճախ ամեն գնով, դիմակայել դրանք, դիմանալ, պաշտպանվել, հնարավորության դեպքում՝ կանխարգելել: Սակայն, ի տարբերություն կենդանիների, մարդիկ վախենում են նաեւ կորցնելու վտանգից՝ հարազատ, ունեցվածք, աշխատանք, պաշտոն, առողջություն, արժեքավոր իր, փող եւայլն: Որոշ մարդիկ վախենում են նաեւ Անծանոթից, ինչի մասին այնքան տպավորիչ կինոնկարներ է ստեղծել suspense-ի (վախից կախյալության) մեծագույն վարպետը՝ **Ալֆրեդ Հիչքոքը**:

Վախի եւ վախենալու այլ դրսեւորումներ ու պատճառներ են ունենում մանավանդ անչափահաս երեխաները. մութը, մենակ մնալը, հայրիկի գիշերային խռմփոցը, սրսկիչը, երբեմն՝ սխալ դաստիարակության հետեւանք՝ շունիկից կամ փիսիկից զգուշանալը, խաղալիքից եւ կամ քաղցրաբլիթից զրկվելը: Նման երեխաները չդարմանվելու դեպքում (ժողովրդային լեզվով ասած՝ վախը չբռնվելու պարագայում), վախը տարիքի հետ մեծանում եւ ծանր դրսեւորումներ է ստանում:

Վախը շրջապատի համար կործանիչ ազդեցություն ու հետեւանքներ է ունենում հատկապես, երբ տվյալ անձն ունի իշխանություն, առավել եւս՝ երբ երկիր ու ժողովուրդ է ղեկավարում: Հենց վախի ազդեցության տակ՝ նա փորձում է դիմադրել իրեն կրծող այդ հիվանդությանը, պայքարել նրա դեմ, հակադրվել դրան, ինքզինքին ու շրջապատին համոզել, որ ինքը չունի վախ, ինքը ոչ թե վախկոտ, այլ՝ վախեցնող է, ուրիշնե՛րն են վախում իրենից:

Եվ ահա՛, երեւան է գալիս բռնակալը՝ տարբեր իր արարքներով, ուրիշներից տարբերվող՝ արտաքին իր պաճուճանքով, նիստուկացով, որոշումներով, գործողություններով, հալածանքներով: Կասկածանքը նրան ստիպում է պաշտպանվել մեծաթիվ զորքով, լրտեսներով, կատարածուներով, գործակալներով, անմեղ մարդկանց դեմ հալածանքներով, բանտարգելությամբ, սպառնալիքներով:

Ես չգիտեմ ինչպիսի՞ մանկություն ու պատանեկություն է ունեցել մեր երկրի վարչապետը, բայց դատելով այդ պաշտոնում նրա պահվածքից ու գործողություններից՝ դյուրին չի եղել նրա կյանքը, ամենեւին: Իսկ խմբագրի պարտականությունները կատարելիս՝ անընդհատ հետապնդվել է նյութական անբավարարությունից, որը նրան ստիպել է դիմել մամուլի համար ոչ նորմատիվային մեթոդների, խորացնելով ընչաքաղցությունը նրա մեջ, միաժամանակ ատելությունը ունեւորների նկատմամբ: Սակայն ամենավախազդեցիկը եղել է 44-օրյա պատերազմը, որը նա վարել է առանց ոչինչ իմանալու եւ հասկանալու այդ եւ հարակից գործերից: Կրել է, կրե՛լ ենք պարտություն, տվել ենք հազարավոր զոհեր, կորցրել-հանձնել ենք, ավելի ուշ, Արցախ հայրենիքն ու երկիրը:

Արի ու մի՛ խենթանա, մի՛ գժվի, մի՛ վախենա: Եվ այդ վախը շարունակվում է առայսօր: **Փաշազադեն** ասում է ճնշիր, փակի՛ր Եկեղեցին, եւ ինքը վախվորած՝ ճնշում, փակում, արգելափակում է եկեղեցականներին: **Էրդողանն** ասում է՝ մոռացի՛ր Ցեղասպանությունը. Արեւմտահայաստանն ու Կիլիկիան, եւ ինքը սարսափած՝ մոռանում եւ փորձում է մոռացնել տալ: **Ալիեւն** ասում է՝ ջնջի՛ր Անկախության հռչակագիրը եւ ճանապարհ տո՛ւր զինվորներիս, եւ ինքը այլայլված՝ կատարում է հրահանգները ավելիով՝ նոր սահմանադրություն է գրել տալիս, նորանոր տարածքներ զիջում: Վախեցած է մեր վարչապետը: Պետք է հասկանալ նրան:

Այլապես ինչո՞վ բացատրենք նրա գործած վերջին **գաֆը**՝ պաշտոնազրկումը Մեծ եղեռնի հուշարձանի տնօրեն Էդիտա Գզոյանի, որն ընդամենը գիրք էր նվիրել ԱՄՆ փոխնախագահին, Արցախի մասին աշխատություն:

Ի՞նչպես ազատել նրան վախից, վախի սինդրոմից: Մեղք է նա, մեղք ենք մենք, մեր հայրենի՛քը:

Մեր պապերն ու տատիկները սովորություն ունեին վախից տառապողներին տանել եկեղեցի, անմեղ գառ մորթել ու մատաղ անել եւ քահանային խնդրել չարխափան աղոթքով կտրել ենթակայի վախը:

Մեր վախկոտը կգնա՞ եկեղեցի՝ մատաղօրհնության:

Չգիտեմ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Իրան-ԱՄՆ-Իսրայել հակամարտություն. ավարտի հակասական սցենարները

***Մերձավոր Արեւելքում եւ նրան հարող երկրներում այս օրերին ամենամեծ ուշադրությունը կենտրոնացած է Իրանի դեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի պատերազմի հանգուցալուծման հեռանկարների վրա: Սակայն ռազմական գործողություններին ներգրավված կողմերից յուրաքանչյուրն ունի պատերազմի ավարտի իր պատկերացումները:***



## ԱՄՆ

ԱՄՆ նախագահի **Դոնալդ Թրամփի** ռազմական նպատակների վերաբերյալ դեռեւս հնարավոր չէ վերջնական գնահատական տալ: Թվում է՝ նրա հետապնդած նպատակները տատանվում են մի քանի ուղղությունների միջեւ: Մի կողմից՝ նա ձգտում է սահմանափակել Իրանի միջուկային ծրագիրը, մյուս կողմից՝ ստիպել Թեհրանին ընդունել ԱՄՆ-ի եւ Իսրայելի բոլոր պահանջները: Ավելին, Թրամփը նաեւ ակնկալում է հասնել Իրանում գործող կրոնապետական համակարգի փլուզմանը:

Մինչ այժմ Իսլամական Հանրապետությունը ո՛չ ենթարկվել է, ո՛չ էլ փլուզվել: Սակայն հակառակորդի շարունակական ռմբակոծությունների հետեւանքով նրա ռազմական կարողությունները զգալիորեն թուլացել են:

Փետրվարին Օմանի միջնորդությամբ Ժնեւում Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ միջուկային հարցի շուրջ ընթացող անուղղակի բանակցությունները, ըստ կողմերի հայտարարությունների, որոշակի առաջընթաց էին արձանագրել: Պաշտոնական Օմանը հետագայում հայտնել է, որ Իրանը պատրաստ էր գնալ զգալի զիջումների, որոնք, ըստ միջնորդի, կարող էին ամուր երաշխիք հանդիսանալ, որ Թեհրանը չի ձգտի միջուկային զենք ձեռք բերել:

Այնուամենայնիվ, Իրանը պատրաստ չէր քննարկել իր բալիստիկ հրթիռային ծրագրի սահմանափակման կամ դադարեցման, ինչպես նաեւ տարածաշրջանում դաշնակից խմբավորումներին աջակցության դադարեցման հարցերը:

Վաշինգտոնի եւ նրա դաշնակիցների համար լավագույն սցենարը Իրանում կրոնապետական կարգերի փլուզումն է եւ դրա փոխարեն Արեւմուտքի համար կանխատեսելի կառավարման համակարգի ձեւավորումը:

➪3

# Թաղենք բոլոր Թալեաթներին

## *105 տարի առաջ, մարտի 20-ին, Բեռլինում թաղեցին Թալեաթին*

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**Գերմանիա**

Մարտի 15-ին ԳԴՀ կառավարության կրոնի եւ հավատի ազատության հարցերի հանձնակատար **Թոմաս Ռախելը** (Thomas Rachel) X-ում հիշեցնում էր, որ նույն օրը «իսլամաֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրն է»՝ համապատասխանաբար՝ հանդուրժողականության հորդորով: Կասկածում եմ, թե մարտի 15-ին Բեռլինի Հարդենբերգշտրասե 16-ում թուրք երիտասարդ ֆաշիստները, որ առանձնահատուկ հարգանքով, ծաղիկներով իրենց սերն ու նվիրվածությունն էին հաստատում Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից Թալեաթ փաշայի հանդեպ, որին 105 տարի առաջ նույն փողոցում ***դիմահար*** կրակոցով սպանել էր հայ վրիժառու, արդարության մարտիկ **Սողոմոն Թեհլիրյանը**, իսլամաֆոբիայի մասին Ռախելի գրառման մասին տեղյակ էին: Ռախելն էլ երեւի տեղյակ չէր, որ X-ում Efeibram@ Tugrul Moskowits անունով օգտատերը, նաեւ շատ ուրիշներ՝ Haber Report-ը, AnkaRapor-ը, Daily Türkist-ը տարածել էին նույն տեսանյութը՝ կից գրությամբ՝ «Որպես Հանրապետության արժեքներին հավատարիմ թուրք երիտասարդներ, մենք կրկին հիշատակեցինք կայսերական դարաշրջանի ներքին գործերի մեր վերջին նախարար, Մեծ վեզիր Թալեաթ փաշային այն փողոցում, որտեղ նա նահատակվեց Բեռլինում 1921 թվականին»:

1921 թվականի մարտի 15-ին «Բեռլիներ թագեբլաթ»-ը (Berliner Tageblatt und Handels-Zeitung) երեկոյան թողարկման մեջ «Փողոցում հրապարակային սպանություն. Կատարողը՝ պարսիկ մի ուսանող ձերբակալվել է» վերնագրով գրում է. «Հարդենբերգշտրասե 17-ին մոտ, ժամը մոտավորապես 11.30-ին տարիքով մի մարդու մի օտարերկրացի ***հետեւից*** սպանել է»: Նույն հոդվածում արձանագրված են կատարողի՝ Սողոմոն Թեհլիրյանի եւ սպանվողի՝Սալի Ալի բեյի անունները: Նույն թերթի հաջորդ օրվա՝ մարտի 16-ի առավոտյան թողարկումը վերնագրում տեղեկությունն ուղղել է՝«Բեռլինում Թալեաթ փաշայի սպանությունը. Հարդենբերգշտրասեի մահափորձը. Կատարողը հայկական քաղաքացիություն ունի» վերնագրով: Այստեղ էլ նշված է հետեւից կրակելու փաստը: Դատավարության արձանագրությունները, վկաների ցուցմունքները վերընթերցելով սրբագրում ենք մեր թերթի առցանց տարբերակում «դիմահար» բառը, որ երեւի բանավոր, գեղարվեստական պատումի ուժով մեր հիշողությանն է դաջվել:



*Սողոմոն Թեհլիրյան*

Բեռլինի ոստիկանության ծանուցումը կարդալով գերմանահայ համայնքի, կազմակերպությունների անդամները՝ Գերմանահայ իրավաբանների միությունը, Գերմանահայ ուսանողների «Միասին» միությունը վրդովված դիմել էին ԳԴՀ իրավապահ մարմիններին՝ հանրահավաքն արգելելու գրավոր հորդորով:

➪3

# Ալի Լարիջանին ահաբեկչության զոհ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ, Իրանում ՀՀ նախկին դեսպան



Իրանի Իսլամական Հանրապետության Անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար **Ալի Լարիջանիի** մահվան լուրը պաշտոնապես հաստատվել է:

ԻԻՀ հոգեւոր առաջնորդ **Ալի Խամենեիի** սպանությունից հետո ձեւավորված լարված ժամանակաշրջանում՝ փետրվարի 28-ից մինչեւ **Մոջթաբա Խամենեիի**՝ որպես նոր առաջնորդ ընտրվելը, Լարիջանիի դերը Իրանի իշխանական համակարգի միասնականության պահպանման գործում գնահատվում է որպես բացառիկ:

Իրանի իսլամական հեղափոխության ավանդույթներին հավատարիմ քաղաքական գործիչ Ալի Լարիջանին 2026 թ. մարտի 17-ին, իր որդու՝ **Մորթեզայի** հետ միասին, զոհ դարձավ Իսրայելի իրականացրած հարձակմանը:

Լարիջանին իր մասնագիտական գործունեությունը սկսել է 1981 թվականին՝ որպես Կենտրոնական լրատվական բաժնի ղեկավար, իսկ մեկ տարի անց միացել է Իրանի Իսլամական հեղափոխության Պահապանների կորպուսին: 1980-ականների վերջում նա զբաղեցրել է իրավական եւ խորհրդարանական բարձր պաշտոններ:

1994-2004 թվականներին Լարիջանին ղեկավարել է Իրանի պետական ռադիո-հեռուստատեսությունը՝ զգալի ազդեցություն ունենալով երկրի մեդիա դաշտի ձեւավորման վրա:

Այնուհետեւ նա միացել է Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդին եւ **Մահմուդ Ահմադինեժադի** նախագահության տարիներին ստանձնել Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող միջազգային բանակցությունների պատասխանատվությունը:

Հետագայում Լարիջանին ընտրվել է Իրանի խորհրդարանի պատգամավոր Ղոմ քաղաքից եւ 2008-ից մինչեւ 2020 թվականը երեք անընդմեջ ժամկետով զբաղեցրել խորհրդարանի նախագահի պաշտոնը:

Թեեւ նա մոտ էր պահպանողական շրջանակներին, սակայն հայտնի էր նաեւ իր չափավոր մոտեցումներով եւ կարեւոր դեր է ունեցել 2015 թվականի միջուկային համաձայնագրի ընդունման գործընթացում:

Հատկապես կյանքի վերջին տարիներին Ալի Լարիջանին Իսլամական Հանրապետության բարձրաստիճան գործիչների շրջանում հայտնի էր իր «պրագմատիզմով»: Սակայն այդ պրագմատիզմն առավելապես դրսեւորվում էր երկրի գաղափարախոսության ձեւավորման եւ պետական քաղաքականության ոլորտում:

Նրա ազդեցիկ դերը նկատելի էր ռազմավարական մի շարք ուղղություններում՝ Իրանի միջուկային ծրագրից մինչեւ Չինաստանի եւ Ռուսաստանի հետ հարաբերություններ, տարածաշրջանում Իրանի աջակցությամբ գործող զինված խմբերի կառավարման հարցերից մինչեւ օրենսդրական գործընթացներ:

Նա մեծ ուշադրություն էր դարձնում նաեւ հարեւան երկրների հետ հարաբերությունների զարգացմանը:

Մեջլիսի նախագահի պաշտոնում Լարիջանին 2010 թ. հոկտեմբերին այցելել է Հայաստան եւ նշանակալի ներդրում ունեցել երկու երկրների միջխորհրդարանական հարաբերությունների զարգացման գործում: Երեւան այցի ընթացքում, ԵՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ, հայ-իրանական տնտեսական, գիտակրթական եւ մշակութային կապերի ամրապնդման գործում ունեցած ավանդի համար նրան շնորհվել է համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

Լարիջանին խորհրդարանի նախագահի պաշտոնում հանդիպումներ է ունեցել Հայաստանից Իրան այցելած բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Որպես Անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար՝ նա հանդիպել է նաեւ Թեհրան այցելած իր հայ գործընկերոջը՝ ՀՀ ԱԽ քարտուղար **Արմեն Գրիգորյանին**: ՀՀ ԱԽ գրասենյակի տվյալներով՝ հանդիպման ընթացքում քննարկվել են Հարավային Կովկասում գործընկերության եւ անվտանգության զարգացման հարցեր:

Հայկական կողմի հետ Լարիջանիի վերջին պաշտոնական հանդիպումը տեղի է ունեցել այս պատերազմի սկսվելուց ընդամենը մի քանի օր առաջ՝ ՀՀ պաշտպանության նախարար **Սուրեն Պապիկյանի** Թեհրան կատարած այցի շրջանակում:

Իր վերջին հանրային ելույթում նա մասնակցել է Երուսաղեմի համաշխարհային օրվա երթին եւ կոշտ դիրքորոշում արտահայտել ԱՄՆ-ի եւ Իսրայելի գործողությունների վերաբերյալ:

Իր հայտարարություններից մեկում Լարիջանին նշել էր, որ Իրանը վրեժխնդիր կլինի իր առաջնորդի արյան համար: Նա նաեւ պաշտոնապես պաշտպանել է Իրանի հարձակումները ամերիկյան բազաների վրա՝ ընդգծելով, որ Իրանը չի ձգտում պատերազմի, սակայն պարտադրված պատերազմի դեպքում չի նահանջի:

Տարածաշրջանում լարվածության սրման պայմաններում Լարիջանիի սպանությունը, որպես Իրանի նոր առաջնորդի մերձավոր շրջապատի առանցքային դեմքերից մեկի, զգալի վակուում է առաջացրել երկրի որոշումների կայացման համակարգում:

Կյանքի վերջին շաբաթներին՝ ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ սրված ճգնաժամի պայմաններում, նա շարունակել է նախկին առաջնորդի քաղաքական գիծը՝ մեղադրելով այդ երկրներին Իրանը «թալանելու եւ քայքայելու» փորձերի մեջ եւ հայտարարելով, որ Թեհրանը չի բանակցելու Վաշինգտոնի հետ:

## «Շվեյցարիան պետք է ակտիվորեն ներգրավվի բնիկ ժողովուրդների եւ նրանց ինքնորոշման իրավունքի պաշտպանության գործում»

⇨1 Այժմ Ադրբեջանի դեմ շարունակական պայքարի այս ծանրակշիռ լծակն են ընտրել ԼՂ հայերի հիմնարար իրավունքների պաշտպանության ջատագով՝ Քրիստոնեական համերաշխության միջազգային կազմակերպության (CSI) ներկայացուցիչ **Ջոյել Ֆելքամփը**, Շվեյցարիա- Հայաստան ընկերակցության նախագահ **Սարգիս Շահինյանը** (վերնագիր ենք դարձրել նրա ձեւակերպումը) եւ ԼՂ ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության կոմիտեի անդամ **Գառնիկ Քերքոնյանը**, որ նույն օրը Ժնեւի մամուլի ակումբում ասուլիս էին հրավիրել՝ Շվեյցարական խաղաղության նախաձեռնության մեկ տարվա ընթացքում գործունեության մասին ամփոփ հիշատակմամբ:

Մեկ տարի առաջ Շվեյցարիայի Դաշնային ժողովի 2 պալատներն էլ միջնորդություն ընդունեցին, որով ԱԳ դաշնային դեպարտամենտին հանձնարարվում էր Ադրբեջանի եւ ԼՂ-ի ժողովրդի ներկայացուցիչների միջեւ խաղաղության ֆորում կազմակերպել: Մեկ տարի անց նման ֆորում դեռեւս չի գումարվել: Ասուլիսին առցանց միանալու հրավերն ընդունել էին «**Ազգ**»ն ու «**Առավոտ**»ը: Վերջինս առցանց տարբերակում նույն օրն արդեն լուսաբանել է ասուլիսում հնչած ելույթների կարեւորը, նաեւ մեր հարցերին տրված պատասխանները, որոնց, տեղի սղությամբ պարտադրված՝ կանդրադառնանք «**Ազգի**» առաջիկա համարում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա
Լուսանկարը՝ csi-ի

## ZDF-ի թղթակցի հարցը Աղաեւին՝ «Երբվանի՞ց է միայն Նախչեւան ձեւը կիրառվում»

«Ազգի» նախորդ համարում «Դիվանագիտական ցուցում՝ Նախիջեւան բառի էթնիկ շեշտադրման վտանգը» վերնագրյալ մեր հոդվածը շարունակում ենք՝ Բեռլինում Ադրբեջանի դեսպան Նասիմի Աղաեւին ուղղված՝ գերմանական ZDF երկրորդ հեռուստաալիքի թղթակցի հարցով: Մարտի 7-ին ZDF-ի թղթակից **Սեբաստիան Էհմը** (Sebastian Ehm) X-ում հարցրել էր՝ «Ես էլ եմ մինչեւ հիմա Նախիջեւան ասել: Այդպես է արձանագրված առցանց աղբյուրների մեծ մասում: Երբվանի՞ց է միայն Նախչեւան ձեւը կիրառվում»: Աղաեւը պատասխանել էր՝ «Խնդրում եմ հարգեք Ադրբեջանի Հանրապետության պաշտոնական գրելաձեւը՝ իր աշխարհագրական անվանումների վերաբերյալ: Դուք էլ Kyjiw եւ Lwiw ձեւերն եք գործածում, ոչ թե Kiew կամ Lwow»: «Սիրով կանեմ, բայց իմ հարցն այն էր, թե երբվանի՞ց է այդպես Nachtschiwan ասվում : Սա նո՞ր կիրառություն է, թե՞ պարզապես մինչ այժմ անտեսվել է», լրագրողը նորից էր հստակեցնում ակնակալում Աղաեւից: Վերջինս կտրուկ էր՝«Միշտ այդպես է եղել: Նախչիվան տեղանունը (գերմաներեն գրությամբ՝ Nachtschiwan, անգլերեն՝ Nakhchivan) ամրագրված է նաեւ Ադրբեջանի Հանրապետության սահմանադրության մեջ»: Էհմի խոսքին ուշադիր կհետեւենք: Նույն հարթակում այլ օգտատերեր Աղաեւին հիշեցրել էին, թե «Nakhijevan է իրականում, հայերեն բառ է՝ հատուկ նշանակությամբ, թուրքերեն տարօրինակ հնչող բառ է, որեւէ բան չի նշանակում» կամ՝ «Հայաստանի հնամենի տեղավայր է», բազմաթիվ նմանաբովանդակ գրառումներ, որոնք Բաքվի դեսպանն անպատասխան էր թողել: Ի դեպ ՌԴ-ում




գտնվող Նոր Նախիջեւանի անունը վիքիպեդիայի ռուսերեն տարբերակում գրվում է Нахичевань-на-Дону կամ Нор-Нахичеван, նույնի ադրբեջաներեն տարբերակում՝ Naxçývan-na-Donú: «**Ազգի**» նախորդ համարում էլ գրել ենք աբսուրդի մասին՝ «Ազերթաջի» գերմաներեն տարբերակում Nachitschewan է՝ Նախիջեւան:

2024-ին Նախիջեւանի մասին գերմանալեզու մամուլում տպված երկրորդ հիշարժան հոդվածը շվեյցարական «Ռեփուբլիկ»-ի դեկտեմբերի 27-ի լուսանկարներով հագեցած ռեպորտաժն է: Բեռլինաբնակ լուսանկարիչ **Մարիո Հելլերը** (Mario Heller) պատմում է տարածքի մեկուսացման մեջ գտնվող բնակիչների, իրենց ապագան Թուրքիայում որոնելու, Ալիեւի վերահսկողության աճի, Նախիջեւանի հրաշք բնության մասին: Խիստ հսկողությամբ եւ կամայական ձերբակալություններով Նախիջեւանին վաղուց ի վեր բնութագրող անունն է տրվել՝ «Ադրբեջանի Հյուսիսային Կորեա»: Սակայն այստեղ եկողները կգտնեն մի վայր, որը լի է պատմությամբ, հիասքանչ բնապատկերներով, հույսի ու անորոշության, մեկուսացման մեջ ապրող մարդկանցով, գրում է Հելլերը: 1995 թվականին նախագահ **Ալիեւը** ինքնավար հանրապետության նախագահ նշանակեց իր ազգական **Վասիֆ Թալիբովին**, որ 2022-ին հեռացել է պաշտոնից՝ պատճառաբանելով առողջական խնդիրները: Իրականում Ալիեւն է չեզոքացրել «փոքրիկ իշխանին», ինչպես Վիգեն Չթրյանին հղում անելով գրում է Հելլերը, որ ավելի լավ վերահսկի Նախիջեւանի տնտեսությունը:

«Երբ փետրվարին առաջին անգամ թռա Նախիջեւանի վրայով, Google Maps-ով տեղեկություններ փնտրեցի, նկատեցի, որ այս տարածաշրջանի մասին հաղորդագրություններ եւ նկարներ հազվադեպ են հանդիպում: Այնուամենայնիվ, Նախիջեւանը, որը հայտնի է որպես «Նոյի երկիր», աշխարհի ամենահին անընդհատ բնակեցված տարածքներից մեկն է: Հնագետներն այստեղ հայտնաբերել են քարե հուշարձաններ, որոնք հարյուր հազարավոր տարեկան են: Ավանդույթի համաձայն, Նոյի տապանը մոտեցել է վեհաշուք Իլանդաղ լեռանը՝ (Օձասար, Վիշապասար), կազմելով դրա երկմասը: Եվրոպայի եւ Ասիայի խաչմերուկում Նախիջեւանի ռազմավարական դիրքը դարեր շարունակ հանգեցրել է տարածքային վեճերի: Միջնադարում տարածքը խիստ բնակեցված էր հայերով, մի փաստ, որն այժմ հերքում է Ադրբեջանի կենտրոնական կառավարությունը: Այն համակարգված կերպով ոչնչացրել է բազմաթիվ քրիստոնեական կրոնական շինություններ», շվեյցարական թերթում արձանագրել էր բեռլինաբնակ լուսանկարիչը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Թաղենք բոլոր Թալեաթներին

⇨1 «Ի հիշատակ արդի Թուրքիայի ճարտարապետ եւ հեղափոխական Թալեաթ փաշայի սպանության» անվանյալ հանրահավաքից զատ, Հարդենբերգշտրասե 22 հասցեում հանրահավաք էր նախաձեռնել Ռասիզմի, ազգայնականության եւ խտրականության դեմ ակտիվիստների միությունը (AKEBI), որ 105 տարի անց երթ էր իրականացնելու «Սփյուռքում հայերի (կյանքի) հետքը» խորագրով՝ քննելով իրողությունները գերմանական ռայխի եւ օսմանյան կայսրության ներհյուսված պատմության լույսի ներքո:

«Ոճրագործներին հարգանքի տուրք մատուցելը չպետք է հանդուրժել», ֆբ-ում հայության բողոքն էր գերմաներեն ձեւակերպել Գերմանահայոց առաջնորդ **Սերովբե եպիսկոպոս Իսախանյանը**: Միջոցառումը, որը մեծարում է ոճրագործին, նրան ներկայացնելով որպես «հեղափոխականի, արդի Թուրքիայի ճարտարապետի», անտեսում է պատմական պատասխանատվությունը եւ վիրավորում զոհերի հիշատակը: Վտանգում է հարաբերականացնել կամ նսեմացնել պատմության ամենամութ դրվագներից մեկը: Սա խնդրահարույց է հատկապես Գերմանիայում՝ մի երկրում, որի խորհրդարանը՝ Բունդեսթագը, 2016 թվականի հունիսի 2-ին բաց քվեարկությամբ ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Հատկապես այն պետությունը, որը հանձնառու է պատմական հանցագործություններին առերեսվելու, հիշողության մշակույթի հանդեպ պատասխանատվության, պարտավոր է հատուկ զգայունություն ցուցաբերել պատմական վարկաբեկված անձանց հանրային հիշատակի հանդեպ»:

Նախորդ տարի, տարիներին էլ մարտի 15-ին թուրքերը հիշատակել էին իրենց ֆաշիստ հոր «նահատակության» օրը, բայց՝ վավերաթուղթ կարդալուց հրաժարվողները նույն փողոցում ժամը՝ 11.30-ին հավաքվում են, բայց սպանության ճշգրիտ վայրը չգիտեն:



*2026-ի մարտի 15-ի հանրահավաքի լուսանկարը՝ Katia Vnsquez Pacheco-ի*

Գերմանական taz-ը մարտի 16-ին անդրադառնալով «թուրք ազգայնականների՝ Թալեաթի «հիշատակի» միջոցառմանը, նկատել էր տվել, որ «նահատակին» մեծարողները ելույթներից հետո Թալեաթի նկարը, թուրքական դրոշը, վարդերը մի թփի հենելով՝ հեռացել են: Քիչ անց թուրքական ֆաշիզմի դեմ երթի մասնակիցներից մեկը այդ վայրից անցնելով վարդերի տեղը փոխել է՝ հալածյալ Եհովայի վկա Օտտո Ռայնհոլդ Զիգելի հիշատակի գայթաքարի վրա է դրել փունջը:

Չնկատել հնարավոր չէ, որ նախկինում ծայրահեղ ազգայնականների խումբն այսքան եռանդուն չէր, կանայք էլ կարծես չկային: Աջակողմյան տրամադրությունների վերելքը Գերմանիայում թուրք ֆաշիստներին նոր ավյուն է հաղորդել ուրեմն, եւ «Թալեաթ կոմիտեի» հայր **Դողու Փերինչեքի**՝ Եվրոպայով մեկ՝ «Հայոց ցեղասպանությունը իմպերիալիստական սուտ է» շարժումը թեեւ Շվեյցարիայում պատժի արժանացրեց նրան, բայց ՄԻԵԴ-ում «կարծիքի ազատության» գռեհիկ պատճառաբանությամբ նրա «հաղթանակից» բացի, Թալեաթին մեծարող սերունդ դաստիարակելու արտոնություն տվեց՝ առաջին հերթին Գերմանիայում, ուր որեւէ պաշտոնյա, պատգամավոր ի պատասխան հայ համայնքի՝ մարտի 15-ին Բեռլինի ոստիկանության ցույցի արտոնության, չընդվզեց: Ֆրանսիայից նույն օրը **Վալերի Բուայեն** քննադատեց Բեռլինի իշխանություններին, որ «Թալեաթ փաշային փառաբանելու հավաք են արտոնում»: Haypress-ը մարտի 13-ին Բեռլինի ոստիկանությանն հարցում էր ուղղել՝ «Հայոց ցեղասպանությունն այստեղ ճանաչված է: Գլխավոր պատասխանատուն Թալեաթն էր, ինչո՞ւ է արտոնվել հավաքը»: Պատասխան իհարկե չեղավ, բայց X-ում հարցմանն ի պատասխան քննարկման մեջ «կարծիքի ազատությունից» կառչածների հետ կար նաեւ հետեւյալ տեսակետը՝ «Ինչո՞ւ արգելել: Ավելի խելամիտ չէ՞ արտոնել՝ վերահսկելով, թե ովքեր են մասնակցում, տվյալներ կհավաքվեն, արձագանքներն ուշադրության կարժանանան»:

Թեեւ Բեռլինի Հարդենբերգ փողոցում 9 սենյականոց բնակարան վարձած Թալեաթը ծպտված՝ Սալի Ալի բեյ անվամբ էր ապրում, բայց նրան ապաստանած երկիրն արտոնեց, որ նրա թաղումն էլ պատվո ծես լինի, իսկ 105 տարի անց ցինիկ մեծարանքի արժանանա: Ինչպես անցյալ տարի, այս տարի էլ մարտի 15-ին թուրքերն սոցցանցերում ակտիվ տարածում էին թուրքական դրոշով ծածկված դիակառքի ընթացքը Բեռլինի փողոցներում, ոճրագործի թաղման թափորը՝ թուրք եւ գերմանացի զինվորականների սգավոր ուղեկցությամբ: Բայց ապրիլի 24-ին ուղեկցող շաբաթվա մեջ գերմանական հեռուստատեսությունը էկրանին էր գամում՝ սփոփող գործողությամբ՝ ֆիլմ էր ցուցադրում Թեհլիրյանի մասին՝ «Մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ» հայտնի նախադասությունը դրոշմելով հեռուստադիտողի հիշողության մեջ: Վերջին տարիներին ոչ այդ ֆիլմն են ցուցադրում, ո՛չ էլ «Աղետը» , եւ արդարացի կլինի, եթե ասենք, որ Գերմանիան մոռացել է հայերիս հանդեպ իր պատմական պատասխանատվությունից բխող հանձնառությունը՝ հիշել եւ հիշեցնելը: Թեհլիրյանի՝ իր արարքը բնութագրող նախադասությունը 2021-ի հունիսի 2-ին դուրս եկավ դատարանի դահլիճից, եւ հստակ սահման գծեց ահաբեկչության եւ ոճրագործին՝ ազատ ապրելու, նոր ոճիրներ գործելու «արտոնությունից» զրկելու, վրիժառուի միջեւ:

Պատահակա՞ն համընկնում է արդյոք՝ 1921 թվականի հունիսի 2-ին սկսվեց Թեհլիրյանի դատավարությունը, իսկ 2016-ի նույն օրը Բունդեսթագը բաց, գրեթե միաձայն քվեարկությամբ ճանաչեց Հայոց ցեղասպանության բանաձեւը: 2015-16-ին «**Ազգը**» մանրամասն լուսաբանել է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու դժվար ընթացքը, թուրքերի եւ գերմանացիների ակտիվ բանավեճերը, գերմանացի գիտնականների, լրագրողների բազմաթիվ հրապարակումները մամուլում, այդ թեմայով բազմաթիվ գրքերի լույսընծայումը: Հատկապես ապրիլյան պատերազմից հետո, հունիսի 2-ին՝ այդ բանաձեւը մեզ համար սոսկ իրավական արձանագրում չէր, այլ՝ պաշտպանություն էր... թվում: **Հանս Լուկաս Քիզերի**՝ «Թալեաթ փաշա. Արդի Թուրքիայի հայրը, ցեղասպանության ճարտարապետը» 532 էջանոց գրքի մասին 2021-ի մայիսի 21-ին հոդված հրապարակեց «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգը»՝ արձանագրելով, թե «քրիստոնյա հայերի ցեղասպանության կազմակերպիչ պանթուրքիստ Թալեաթի քաղաքական դիմանկարի հեղինակ Քիզերը ցույց է տալիս Թալեաթի գործունեության շարունակականությունը՝ մինչեւ **Էրդողան**»: Գիտնականը զգուշացնում է, քաղաքական գործիչներից ո՞վ է լսում: Իսկ X-ում Թալեաթի թաղման պատմական տեսանյութը տարածած Նաբի Յուչել լրագրող ներկայացող օգտատերը երկարբարակ գրությունն ամփոփել էր այսպես. «Թալեաթ փաշան հայտարարել էր՝ «Եթե մեկ Թալեաթ գնա, հազար Թալեաթ կգա»: Եվ այդպես էլ եղավ: Մինչ օրս բազմաթիվ անհաս Թալեաթներ փրկել են Թուրքիային: Գիտակցե՛նք սա»:

Բեռլինում գոնե մեկ անգամ եղած հայն այցելում է Թալեաթի սպանության վայրը, մինչ այստեղ մի օր Թեհլիրյանի հուշարձանը կկանգնեցվի՝ յարժանավորումն ցեղասպան ոճրագործից մարդկության ազատարարի: Հեռու է այդ օրն անկասկած, բայց հուշը, հիշողությունը եթե ապրի, հուշարձան կլինի: Մարտի 15-ին Բեռլինի հայկական դպրոցի սաները, նրանց ծնողներն ու ուսուցիչները պատմական շրջայցով եղել են Հարդենբերգ 4 եւ 17 հասցեներում, որտեղ ապրել է Սողոմոն Թեհլիրյանը, ապա նույն փողոցի այն հատվածում, որտեղ Թեհլիրյանը հայ ժողովրդի դահճի մահապատիժն է իրականացրել: Լեփսիուսհաուսի աշխատակից պատմաբան **Հայկ Մարտիրոսյանը** պատմել է «Նեմեսիս» գործողության, Սողոմոն Թեհլիրյանի, 5 մյուս վրիժառուների գործունեության վերաբերյալ մանրամասներ: Եւ ես շատ շնորհակալ եմ նրան:

Լուսանկարները՝ taz-ի

# Իրան-ԱՄՆ-Իսրայել հակամարտություն...

⇨1 ԱՄՆ-ի համար եւս մեկ ցանկալի արդյունք կարող է լինել այն, որ Իսլամական Հանրապետությունը փոխի իր վարքագիծը եւ դադարեցնի տարածաշրջանում պրոքսի ուժերին ցուցաբերվող աջակցությունը: Սակայն **Մոջթաբա Խամենեիի**՝ որպես նոր առաջնորդի հնարավոր առաջխաղացման պարագայում դա քիչ հավանական է թվում, քանի որ նրա առաջնահերթությունը կարող է լինել վրեժխնդրությունը:

Հորմուզի նեղուցի հնարավոր արգելափակումը եւ դրա հետեւանքով նավթի համաշխարհային գների աճը կարող են ճնշում գործադրել Թրամփի վրա՝ ստիպելով նրան դադարեցնել պատերազմը:

Բացի այդ, ԱՄՆ Ազգային հակաահաբեկչական կենտրոնի տնօրեն **Ջոզեֆ Քենթի** հրաժարականը՝ ի նշան Իրանում ԱՄՆ-Իսրայել պատերազմի դեմ բողոքի, եւս բարենպաստ զարգացում չէր Թրամփի համար:

## Իրան

Իրանը ձգտում է հնարավորինս արագ ավարտել պատերազմը, սակայն ոչ ցանկացած գնով՝ հատկապես ոչ ԱՄՆ-ի բոլոր պահանջներին լիովին ենթարկվելու հաշվին:

Թեհրանը գիտակցում է, որ, հավանաբար, ունի «ռազմավարական համբերություն»՝ դիմակայելու Դոնալդ Թրամփին, եւ այդ առումով նաեւ աշխարհագրությունն է նրա օգտին: Իրանը Պարսից ծոցի երկրների շարքում ունի ամենաերկար ծովափը եւ կարող է երկար ժամանակ վտանգել նավերի անցումը Հորմուզի նեղուցով, որով սովորաբար անցնում է աշխարհի նավթի մոտ 20 տոկոսը:

Պատերազմի հետեւանքների կառավարման հարցում աջակցություն ստանալու նպատակով ԱՄՆ նախագահի կոչը լայն արձագանք չգտավ: Մեծ Բրիտանիան, եվրոպական երկրներն ու այլ պետություններ պատրաստակամություն չհայտնեցին առեւտրային նավերին ուղեկցելու համար միջոցներ տրամադրել:

Իրանի պաշտոնական դիրքորոշումն այն է, որ պատերազմը պետք է ավարտվի հստակ երաշխիքներով, որ երկիրը հետագայում չի ենթարկվի նոր հարձակումների: Թեհրանը նաեւ պահանջում է փոխհատուցում՝ ԱՄՆ-ի եւ Իսրայելի օդային հարվածների հետեւանքով պատճառված միլիարդավոր դոլարների վնասների համար:

Թեեւ նման պահանջների իրականացումը քիչ հավանական է, Իրանի համար կարեւոր է ինչպես միջազգային հանրության, այնպես էլ սեփական ժողովրդի առաջ ներկայանալ որպես պատերազմում հաղթող կողմ, որն ունակ է նույնիսկ ռազմատուգանքի պահանջ ներկայացնել:

## Իսրայել

Պատերազմի երեք հիմնական կողմերից թվում է, որ Իսրայելն է ամենաքիչը շտապում դրա ավարտին հասնել:

Իսրայելը ձգտում է հնարավորինս ոչնչացնել Իրանի բալիստիկ հրթիռների զինանոցի մեծ մասը, ինչպես նաեւ հրամանատարական կենտրոնները, ռադարային կայաններն ու ռազմական բազաները:

Միեւնույն ժամանակ, Իսրայելը ցանկանում է, որ Իրանը հստակ հասկանա՝ նման ռազմական կարողությունների վերականգնման որեւէ փորձ կունենա ծանր հետեւանքներ, քանի որ Իսրայելի օդուժը կարող է որոշ ժամանակ անց վերադառնալ եւ կրկին հարվածներ հասցնել:

Իսրայելը Իրանի հրթիռային եւ միջուկային ծրագրերը գնահատում է որպես գոյաբանական սպառնալիք:

Մինչեւ այս պատերազմի սկիզբը Իրանն ուներ զարգացած տեղական հրթիռային եւ անօդաչու սարքերի արդյունաբերություն: Մասնավորապես, «Շահեդ» տեսակի անօդաչուները տրամադրվում էին Ռուսաստանին՝ Ուկրաինայի պատերազմում օգտագործելու համար:

Բացի այդ, Իրանը զբաղվում էր ուրանի հարստացմամբ, ինչը, նրա հակառակորդների գնահատմամբ, գերազանցում է քաղաքացիական միջուկային էներգիայի համար անհրաժեշտ մակարդակը:

**Բենիամին Նեթանյահուի** կառավարությունը այս երկու գործոնները՝ հրթիռային ծրագիրը եւ միջուկային գործունեությունը, դիտարկում է որպես սպառնալիքներ, որոնց հետ Իսրայելը չի կարող համակերպվել:

Կազմեց՝ Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆԸ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Խաչատուր Բադալյան. Ռուսական օպերայի հայկական ձայնը

*ԵՐԵՎԱՆ-ՄՈՍԿՎԱ - Խաչատուր Բադալյանը (ծնվ. 1982, Օրջոնիկիձե, այժմ՝ Վլադիկավկազ) ռուսաստանյան օպերային երգիչ է (տենոր): 1996-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Դոնի Ռոստով: Սովորել է տնտեսագիտական լիցեյում, ապա՝ Դոնի պետական տեխնիկական համալսարանում: Համալսարանը չավարտած՝ ընդունվել է Ռոստովի Ռախմանինովի անվան պետական կոնսերվատորիա: 2004-2006 թթ. եղել է Ռոստովի մարզային ֆիլհարմոնիայի մեներգիչ: 2007-2012 թթ. եւ 2016-ից Մոսկվայի «Նովայա օպերա» թատրոնի մեներգիչն է: 2008 թվականին հրավիրվել է Մեծ թատրոն՝ կատարելու Ռուդոլֆի դերերգը («Բոհեմ»), իսկ հաջորդ տարի նույն բեմում երգել է Վոդեմոնի պարտիան («Իոլանտա»): 2008 թվականին դափնեկիր է դարձել Սանկտ Պետերբուրգում Լուչանո Պավարոտտիի հիշատակին նվիրված տենորների միջազգային մրցույթում, իսկ 2010-ին դարձել է Գալինա Վիշնեւսկայայի անվան օպերային արտիստների III միջազգային մրցույթի հաղթող: 2012-ից Մարիինյան թատրոնի հրավիրյալ մեներգիչ է: Երգչի խաղացանկում են Ալֆրեդի («Տրավիատա»), Խոսեի («Կարմեն»), Ֆաուստի («Ֆաուստ»), Ֆորեստոյի («Աթիլլա»), Շառլ VII-ի («Օռլեանի կույսը»), Վլադիմիր Իգորեւիչ («Իգոր իշխան») եւ այլ դերերգեր:*

**- Հարգելի՛ Խաչատուր, դժվար չէ՞ր ոչ ռուսական անունով երիտասարդ երգչի համար ու ազգանունով ինքնահաստատվել Ռուսաստանի մայրաքաղաքի մշակութային կյանքում:**

- Ես նման խնդիրներ չեմ ունեցել: Ռուսաստանում հայերին սիրում եւ գնահատում են: Ռուսաստանում մեծաթիվ հայ համայնք կա, հայերը միշտ հայտնի են եղել որպես տաղանդավոր եւ աշխատասեր ժողովուրդ: Դեռեւս 18-րդ դարի վերջից Եկատերինա Բ կայսրուհին նպաստել է հայերի վերաբնակեցմանը Ռուսաստանի հարավում՝ արհեստների զարգացման նպատակով: Հայերը հիմնադրել են Նոր Նախիջեւան քաղաքը (այժմ՝ Դոնի Ռոստովի մի մասը) եւ մի շարք գյուղեր: Ռոստովում են ապրում մայրս եւ քույրս՝ ընտանիքով: Երաժիշտների մասին խոսելիս բավական է հիշել տաղանդավոր **Լիսիցյանների** ընտանիքը, ինչպես նաեւ իմ աշխարհահռչակ գործընկերներ **Քրիստինա Մխիթարյանին**, **Աննա Ագլատովային** եւ այլոց:

**- 2013-ին մի քննադատ գրել էր, որ դուք ավելի կամերային, քան օպերային երգիչ եք: Հավանաբար նրա վրա մեծ ազդեցություն էր թողել ձեր ելույթը Պավարոտտիի հիշատակին նվիրված տենորների միջազգային մրցույթում, որտեղ հատուկ մրցանակ եք ստացել նեապոլիտանական երգերի լավագույն կատարման համար: Սակայն կյանքը ցույց տվեց, որ դուք հաջողությամբ հաստատվեցիք հենց օպերայում: Ինչպե՞ս եք վերաբերվում նման կարծիքին:**

- Քննադատությունը միշտ շատ սուբյեկտիվ է: Իմ օպերային դեբյուտը եղել է Լոենգրինի դերով Վագների համանուն օպերայում, երբ 25 տարեկան էի: Հանդես եմ եկել բազմաթիվ այլ պարտիաներով աշխարհի խոշորագույն բեմերում: Երգչի ձայնը մշտապես զարգանում է, տարիքի հետ դառնում է ավելի ծավալուն, ավելի ամուր: Նույնիսկ կասեմ, որ ափսոսում եմ, որ իմ խաղացանկում քիչ են կամերային գործերը, որովհետեւ ինձ առավելապես հրավիրում են մեծակտավ ստեղծագործությունների մասնակցելու:



*Խաչատուր Բադալյան*

**- Ի՞նչ դեր ունի լեզուների իմացությունը դասական երգչի ստեղծագործական գործունեության մեջ:**

- Այն չափազանց կարեւոր է օպերային երգիչների համար: Ես ազատորեն խոսում եմ անգլերեն եւ իտալերեն, պակաս չափով՝ ֆրանսերեն: Գերմաներենին տիրապետում եմ հիմնականում վոկալիստի մակարդակով՝ որքան որ անհրաժեշտ է երգելիս հնչյունաբանության օրենքները հասկանալու համար: Օպերայի համար ամենահարմար լեզուն իտալերենն է: Այն ունի լուսավոր, հստակ ձայնավորներ: Դա կարեւոր է երգեցողության համար: Ձայնի խորացումից խուսափելու համար: Այդպիսի ձայնավորներն են ստեղծում երգչի ամենապայծառ ու գեղեցիկ տեմբրը: Իտալերենի բաղաձայնները փափուկ են, եւ ձայնավորների ու բաղաձայնների ճիշտ միավորումը ստեղծում է իտալական լեգատոն՝ «կապակցված», հարթ ու հավասարահունչ ձայնարտադրությունը:

Հաջորդը, թերեւս, ֆրանսերենն է: Այն ունի ռնգային ձայնավորներ, որոնք պետք է սովորել ճիշտ երգել: Գերմաներենը երգելու համար ավելի բարդ է: Գերմանական լեգատոն տարբերվում է իտալական դասական դպրոցից: Գերմաներենում մեծ դեր ունեն հենց բաղաձայները: Ես կասեի՝ դա արդեն ձայնի տիրապետման հաջորդ աստիճանն է, երբ գիտես՝ ինչպես երգել ձայնավորները եւ կարողանում ես նույնիսկ կոշտ բաղաձայների միջով պահպանել նույն լեգատոն: Ռուսերենի ձայնավորներն ավելի խոր են հնչում: Սակայն քանի որ մանկուց խոսում եմ ռուսերեն, ինձ համար դա տեղի է ունենում որոշակի օրգանական ձեւով:

**- Բացի դասական խաղացանկից, դուք մասնակցել եք նաեւ ժամանակակից օպերային բեմադրությունների: Որքանո՞վ է ձեզ հոգեհարազատ ժամանակակից օպերան՝ ստեղծագործական հետաքրքրությո՞ւն է, թե՞ ավելի շուտ՝ մասնագիտական անհրաժեշտություն:**

- Այո՛, մասնակցել եմ ժամանակակից բազմաթիվ օպերաների բեմադրությունների: Նույնիսկ գուցե հիմա դրանք ավելի շատ են, քան դասականները: Կարծում եմ՝ դա պայմանավորված է այն իրողությամբ, որ մարդիկ գնում են կինո, համացանցում շատ հետաքրքրական նյութ կա, ամենուր արդեն ներգրավված է արհեստական բանականությունը: Սովորական դասական բեմադրությամբ հանդիսատեսին գրավել կարող են միայն շատ հարուստ, բարձրակարգ թատրոնները, որոնք ունակ են ստեղծելու շքեղ, գունեղ ներկայացումներ՝ ասեղնագործված զգեստներով, թանկարժեք մեծ բեմա-



*Խաչատուր Բադալյանը որդու՝ Դավթի հետ, որն արդեն կատարել է Դոլորեի դերը «Մադամ Բաթերֆլայ» օպերայում:*

զարդերով եւ հրավիրել համաշխարհային մեծության երգիչների: Ավելի քիչ ֆինանսական հնարավորություններ ունեցող թատրոնները հաճախ հանդիսատեսին գրավում են ժամանակակից, անսովոր բեմադրություններով՝ առաջարկելով նորություն: Ինձ համար անձամբ կարեւոր է, որ ամեն ինչ հարմար լինի երգելու համար, չլինի գռեհիկ կամ անհամապատասխան, եւ բեմադրությունը չհակասի օպերայի դիպաշարին ու կոմպոզիտորի մտահղացմանը:

**- Շատ տարիներ առաջ, երբ ինքս որպես տենոր երգում էի կամերային երգչախմբում, բազմաթիվ անեկդոտներ եմ լսել հենց տենորների մասին: Ինչպե՞ս եք վերաբերվում դրանց: Եվ եթե դրական՝ կարո՞ղ եք մի անեկդոտ պատմել:**

- Կարծիք կա, թե տենորների համար իրենց ձայնից կարեւոր ոչինչ չկա, եւ որ նրանք սովորաբար այնքան էլ խորը մարդիկ չեն: Կարծում եմ՝ դա գալիս է այն ճշմարտությունից, որ մյուս ձայների համեմատ՝ տենորի համար երգել սովորելն ավելի բարդ է: Տենորներն ունեն շատ դժվար երգամասեր, ու հաճախ հենց նրա՛նք են կատարում գլխավոր դերերը: Պարտիաներում շատ են վերին նոտաները եւ մեծ պատասխանատվությունը: Իմ փորձից կարող եմ ասել, որ տեխնիկապես ամենապատրաստված վոկալիստները հենց տենորներն են: Որովհետեւ եթե դու դառնում ես հաջողակ տենոր, ապա արդեն անպայման տիրապետում ես վոկալ տեխնիկայի նրբություններին:

Հիշեցի մի անեկդոտ: Իտալական մի գյուղում ծնվում է մի տղա, որը լաց լինելու փոխարեն ծննդյան իսկ պահից սկսում է երկարաձիգ արտասանել մեկ բառ՝ «Una, uuuuna!»: Ծնողները երեխային տանում են գյուղի բժշկի մոտ եւ խնդրում նրա ուղեղից մի հատված կտրել, որովհետեւ հասարակ գյուղական ընտանիքին այդպիսի ինտելեկտուալ պետք չէ: Վիրահատությունից հետո տղան արթնանում է եւ կրկին ծոր տալով ասում է՝ «Una, uuuna!»: Բժիշկը նորից է կտրում ուղեղի մի մասը՝ այս անգամ թողնելով միայն փոքրիկ մի կտոր: Ամբողջ գյուղը հավաքվում է՝ տեսնելու, թե ինչ կլինի: Տղան արթնանում է, շուրջը նայում, սկսում է բացականչել՝ «Una, «uuuuuna!», եւ հանկարծ երգում է՝ «Una furtiva lagrima!»* (*ծիծաղում ենք*):

Ի դեպ, նվագախմբի երաժիշտներն էլ նույնքան անեկդոտներ են պատմում ալտահարների մասին...

**- Այո, գիտեմ... Խաչատո՛ւր, դուք, կարծես միշտ գերազանց ֆիզիկական վիճակում եք, մինչդեռ տենորի կերպարը սովորաբար զուգորդվում է թմբլիկ կերպարի հետ: Որքա՞ն կարեւոր են ֆիզիկական վարժությունները դասական երգչի համար:**

- Օպերային երգիչների համար ֆիզիկական պատրաստվածությունը չափազանց կարեւոր է: Բեմում միայն չես երգում. կատարվում են բազմաթիվ շարժումներ: Երբեմն պետք է երգել վազքից անմիջապես հետո, պատահում է նաեւ, որ հարկավոր է խաղընկերուհուդ կրել ձեռքերիդ վրա՝ միաժամանակ չխախտելով շնչառությունդ: Ես երկար տարիներ զբաղվել եմ թեքվանդոյով, այկիդոյով, ապա՝ բոդիբիլդինգով: Սպորտը միշտ եղել եւ մնում է իմ կյանքի մի մասը: Այժմ մեծ հաճույքով զբաղվում եմ բռնցքամարտով: Վոկալիստների համար գլխավորը որովայնի մկանները չափից ավելի չլարելն է: Իսկ սպորտը միշտ օգտակար է:

**- Ձեր կամերային խաղացանկում կա՞ն հայկական երգեր:**

- Երբ ապրում եւ սովորում էի Դոնի Ռոստովում, երգում էի Կոմիտասի ստեղծագործությունների փոքրիկ շարքեր: Շատ եմ սիրում նրա գործերը եւ փորձում եմ որոշ երգեր ներառել իմ մենահամերգներում:

**- Հյուսիսային Օսեթիայում բազմաթիվ հայեր բնակվում են հնուց ի վեր: Ձեր ընտանիքը վաղո՞ւց է ապրում այնտեղ, եւ պահպանվո՞ւմ են հայկական ավանդույթներ:**

- Պապս՝ նույնպես Խաչատուր Բադալյան, ծնունդով Գեմուր գյուղից էր՝ Ադրբեջանական ԽՍՀ Շահբուզի շրջանից: Հայրենական մեծ պատերազմից հետո սովորել է Մոսկվայում՝ Ֆրունզեի անվան ակադեմիայում, հասել է գնդապետի կոչման: Հետագայում, Գերմանիայում ծառայությունից հետո ընտանիքով տեղափոխվել է Օրջոնիկիձե, որտեղ էլ ծանոթացել են ծնողներս: Մորս ընտանիքն այնտեղ ապրել է երկար տարիներ: Մինչ օրս այնտեղ շատ հարազատներ ունեմ: Հայկական ավանդույթներն, իհարկե, պահպանվում են: Ինձ մկրտել են Վլադիկավկազի հայ առաքելական եկեղեցում: Միշտ նշում ենք բոլոր հայկական տոները եւ հանդիսությունները:

**- Զգո՞ւմ եք (կամ ուրիշները զգո՞ւմ են) հայկական խառնվածք ձեր երգեցողության մեջ:**

- Իհա՛րկե: Իմ խառնվածքն օգնում է այնպիսի դերերգերում, ինչպիսիք են Խոսեն՝ «Կարմեն»-ում, Տուրիդդուն՝ «Գեղջկական ասպետություն»-ում եւ այլն: Սակայն պետք է նաեւ կարողանաս տիրապետել ինքդ քեզ, չափից ավելի չտարվես, պահպանես սառնասրտությունը եւ չվնասես ձայնդ:

⇨5

# Ուժեղ հարված համաշխարհային տնտեսությանը. ի՞նչ են ասում թվերը

***Իրանի դեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի ռազմական գործողությունները, ինչպես նաեւ Թեհրանի կողմից Պարսից ծոցի տարածաշրջանում ձեռնարկված պատասխան հարվածները ցնցել են համաշխարհային ֆինանսական եւ էներգետիկ շուկաները՝ առաջացնելով մտահոգություններ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ու հնարավոր ընդհանուր անկման վերաբերյալ: Այս մասին մարտի 18-ին ծավալուն վերլուծական հոդվածով է հանդես եկել Քաթարի «Ալ Ջազիրա» միջազգային հեռուստաալիքը: Պատերազմի համաշխարհային տնտեսական ազդեցության բերող հիմնական ցուցանիշները բավական խոսուն են:***



Փետրվարի 28-ին Միացյալ Նահանգները եւ Իսրայելը սկսեցին խոշոր ռազմական գործողություն Իրանի դեմ: Թեհրանը պատասխանեց բալիստիկ հրթիռային հարվածների շարքով: Դրանք ուղղված էին Իսրայելին, ԱՄՆ-ի ռազմական բազաներին, նավթի պահեստներին եւ Պարսից ծոցի տարածաշրջանի այլ կարեւոր ենթակառուցվածքներին: Իրանի հարձակումները լրջորեն խաթարեցին Հորմուզի նեղուցով երթեւեկությունը, որով տեղափոխվում է աշխարհի նավթի ու գազի մատակարարումների ավելի քան 20%-ը: Անցյալ հինգշաբթի Թեհրանը Իրաքի տարածքային ջրերում հարձակվեց նավթատար նավերի վրա: Այս ամենը միասին, նշվում է հրապարակման մեջ, հանգեցրել է նավթի գների կտրուկ աճի: Մարտի 16-ի առավոտյան Brent տեսակի նավթի գինը հասել է մեկ բարելի համար 106 դոլարի, ինչն ավելի քան 40%-ով ավելի է, քան փետրվարի 27-ին գրանցված 72 դոլարի մակարդակը: «Քփլեր» ընկերության նավթի ավագ վերլուծաբան **Մույու Սյույի** խոսքով՝ պատերազմի սկսվելուց ի վեր հեղուկացված բնական գազի (LNG) գները ավելի կտրուկ են աճել՝ գրեթե 60%-ով: «Քաթար էներջի» ընկերությունը մարտի 2-ին դադարեցրել է գործունեությունը իրանական անօդաչու թռչող սարքի հարձակումից հետո՝ լարվածություն ստեղծելով համաշխարհային շուկայում: Քաթարը մատակարարում է աշխարհի LNG-ի մոտ 20%-ը:

Նավթամթերքների գները ՝ բենզինից եւ դիզելային վառելիքից մինչեւ ավիացիոն վառելիք ու մազութ, նույնպես զգալիորեն աճել են: Մույուն նշել է, որ այս միտումը հավանաբար կշարունակվի, եթե Հորմուզի նեղուցով երթեւեկությունը սահմանափակվի:

Էներգիայի ներմուծման ծախսերի աճի հետ մեկտեղ, ասվում է հոդվածում, էներգատար տնտեսությունների արտադրողականությունը սկսում է նվազել: «Գլոբալ փեթրոլ փրայսիզ» սակարանային հարթակի տվյալներով, փետրվարի 28-ից ի վեր առնվազն 85 երկրներում բենզինի գների աճ է գրանցվել: Ապրիլին գների աճ է սպասվում նաեւ աշխարհի այլ տարածաշրջաններում: Տնտեսագետների կարծիքով, սա ազդում է արտադրության եւ ծառայությունների ծավալի վրա՝ սրելով ճգնաժամը: Մույու Սյույը նշել է, որ նավատերերը նույնպես տատանվում են նոր պատվերներ ընդունելու հարցում, բունկերային վառելիքի ռեկորդային գների պատճառով:

«Բլումբերգ նյուզ»-ի տվյալներով, պատերազմի սկսվելուց ի վեր համաշխարհային ֆոնդային շուկաները 5.5%-ով անկում են ապրել, ընդսմին ամենաշատը տուժել է Ասիան: Խոշորագույններից փետրվարի 28-ի համեմատ ամենամեծ անկումը գրանցվել է Տոկիոյի՝ 11%, Սաուդյան՝ 9,6%, հնդկական՝ 7% բորսաներում: Գլոբալ հարցերի մերձավորարեւելյան խորհրդի փորձագետ **Ֆրեդերիկ Շնայդերը** պարզաբանել է, որ ասիական շուկաներն էներգետիկ ցնցման հարցում ավելի խոցելի են: Այդ նույն ժամանակ ռուսական բաժնետոմսերի գներն աճում են, քանի որ երկիրը կարող է օգտվել Պարսից ծոցում ածխաջրածնային պակասուրդից:

Արժույթի միջազգային հիմնադրամի կառավարիչ տնօրեն **Քրիստալինա Գեորգիեւան** զգուշացրել է, որ երկարատեւ հակամարտությունը կստեղծի գնաճային ռիսկեր: Շնայդերն իր հերթին նշել է, թե Չինաստանն ավելի լավ է պատրաստված՝ էներգիայի բազմազանեցման (դիվերսիֆիկացում) եւ վերականգնվող էներգիայի ու միջուկային էներգիայի ոլորտում ներդրումների շնորհիվ: Եվրոպան ամենաշատն է զգում հետեւանքները, քանի որ կորցրել է ռուսական գազին հասանելիությունը «Հյուսիսային հոսք» խողովակաշարի դիվերսիայի պատճառով: ԱՄՆ-ում, չնայած էներգետիկ ինքնավարությանը, բենզինի գների աճը հարվածում է ֆերմերներին եւ բնակչության խոցելի խմբերին, ինչը հատկապես ուժեղանում է միջանկյալ ընտրությունների տարում:

«Քեփիթըլ Էքոնոմիքս»-ը, ըստ հրապարակման, կանխատեսում է, որ եթե հակամարտությունը շարունակվի, Եվրոգոտու ՀՆԱ-ի աճը կդանդաղի մինչև 0.5%, իսկ Չինաստանինը 3%-ից ցածր կլինի: ԱՄՆ տնտեսությունը, կանխատեսումների համաձայն, 2026 թվականին կգերազանցի մյուս երկրների տնտեսությանը՝ աճելով 2.25%-ով: Եվրոգոտում գնաճը կարող է գերազանցել 4%-ը, ինչը Եվրոբանկին եւ Ճապոնիայի բանկին կստիպի խստացնել դրամավարկային քաղաքականությունը:

Պատերազմը, հավելել է լրատվամիջոցը, հանգեցրել է եւ ավիատոմսերի գների կտրուկ աճի: Տարածաշրջանի օդային տարածքը փակ է կամ սահմանափակված: Qantas Airways-ը, SAS-ը, Air New Zealand-ը, IndiGo-ն և Air India-ն արդեն հայտարարել են տոմսերի գների թանկացման մասին: Ինքնաթիռային վառելիքի գները մեկ բարելի համար 85-90 դոլարից աճել են մինչեւ 150-200 դոլար: Որոշ ավիափոխադրողներ (Lufthansa, Ryanair) ապահովագրվում են՝ ամրակայելով գինը ապագայի համար, ինչը մասամբ մեղմում է հարվածը: Սակայն Պարսից ծոցը շրջանցելու անհրաժեշտությունը Ասիայից դեպի Եվրոպա թռիչքները դարձնում է ավելի երկար եւ թանկ:

**Գ. Մ.**

# Վարչական ռեսուրսի չարաշահում, իսկ այս անգամ՝ ճնշում ազատ մամուլին

### ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (OSCE/ODIHR)

«Սույնով Ձեր ուշադրությունն ենք հրավիրում «Հրապարակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանի նկատմամբ սկսված գործընթացի վրա, որն ակնհայտորեն կրում է քաղաքական բնույթ՝ կապված առաջիկա ընտրական գործընթացների հետ:

### Հիմնական խնդիրը՝ Ժամանակի միտումնավոր ընտրություն

Հարցաքննության հիմքը 2024թ. դեկտեմբերին (ավելի քան 15 ամիս առաջ) հրապարակված խմբագրականն է: Այս հին հոդվածի վերակենդանացումը հենց այսօր՝ ընտրական արդեն իսկ սկսված գործընթացում, ուղղակիորեն հակասում է Ձեր իսկ կողմից ընդունված CDL-AD(2016)004 ուղեցույցի սկզբունքներին /13-րդ կետ/, որպես ուղղակի միջամտություն Ընտրական գործընթացին.

Վարչական ռեսուրսի չարաշահում. Իրավապահ համակարգի օգտագործումը՝ անցյալի դեպքերը «քաղաքական վրեժխնդրության» կամ լռեցնելու համար կիրառելը, հանդիսանում է վարչական ռեսուրսի անարդարացի օգտագործում:

Հավասար պայմանների խախտում. Քանի որ «Հրապարակը» հարթակ է տրամադրում անկախ մոնիտորինգային նախաձեռնություններին, նրա խմբագրի նկատմամբ հետապնդումը նպատակ ունի խաթարել «խաղի հավասար պայմանները»:

**Եզրակացություն.**

1.5 տարի անց այս գործի հարուցումը փաստում է, որ նպատակը ոչ թե արդարադատությունն է, այլ նախընտրական շրջանում քննադատական ձայների լռեցումը: Մենք սա որակում ենք որպես վարչական ռեսուրսի կոպիտ չարաշահում եւ ճնշում ազատ մամուլի վրա»:

***«ՕՐԻՆ-2026»***
***14:48, 18 մարտ, 2026***



# Խաչատուր Բադալյան. Ռուսական օպերայի հայկական ձայնը

⇨4

**- Եթե չեմ սխալվում, անցյալ տարի հանդես եկաք Երեւանում...**

- Այո, երջանկություն ունեմ ամեն տարի ելույթ ունենալու Երեւանում: Ամեն ինչ սկսվեց հայ մեծ տենոր Գեղամ Գրիգորյանի հոբելյանից, որին ինձ հրավիրեցին երգելու: Այդ ժամանակից ի վեր Երեւանում բեմ եմ բարձրացել մի շարք օպերաներում՝ «Տրավիատա», «Կարմեն», «Տուրանդոտ»... Միշտ ուրախ եմ լինել պատմական հայրենիքում եւ հատկապես սիրում եմ արեւոտ Երեւանը: Եվ աշխարհի որ երկրում էլ հանդես եմ գալիս, միշտ հաճելի է, երբ դահլիճում ներկա հայերը ելույթից հետո մոտենում են ու երախտագիտությամբ շնորհավորում:

Վերջում կցանկանայի ավելացնել, որ երաժշտությունը լավագույն դիվանագետն է: Եվ, անկախ քաղաքական որեւէ տարաձայնությունից, երաժիշտները միշտ եղել են եւ կլինեն աշխարհի ժողովուրդներին միավորող օղակը: Ցավոք, վերջին տարիներին ռուս երգիչների համար (այդ թվում՝ հայկական արմատներ ունեցող) արտերկրում հանդես գալը բարդացել է պատժամիջոցների պատճառով: Հույս ունեմ, որ շուտով ամեն ինչ կբարելավվի:

**- Շնորհակալություն պատասխանների համար, Խաչատո՛ւր, եւ հույս ունեմ կրկին տեսնել ձեզ երեւանյան բեմում:**

* «Una furtiva lagrima!» (իտալերեն՝ թաքուն մի արցունք) - տենորի նշանավոր մեներգ Դոնիձետիի «Սիրո ըմպելիքը» օպերայից:

# Իրանում պատերազմը՝ «Թրամփի ուղու» եւ Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացի փորձություն

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**



ԹՐԻՓՓ նախագիծը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացի կենտրոնական տարր է, եւ դրա իրականացման հետ կապված խնդիրները կարող են բացասական հետեւանքներ ունենալ երկու երկրների համար, զգուշացնում են փորձագետները։ Այս պնդմամբ է սկսվում բրիտանական BBC ընկերության ռուսական ծառայության մարտյան մի հրապարակումը, որը վերնագրված է «Խաղաղության գործընթացի փորձություն. արդյո՞ք Իրանում պատերազմը սպառնում է «Թրամփի ուղուն» եւ Հայաստան-Ադրբեջան հարաբերություններին»։

Խնդիրն այն է, նկատում է կայքը, որ այս երթուղին պետք է անցնի Արաքս գետի երկայնքով, որով ձգվում է Հայաստանի եւ Իրանի սահմանը, մինչդեռ այս շրջանը Իրանի համար խիստ կարեւոր առեւտրային հանգույց է, այստեղով է անցնում նաեւ Իրան-Հայաստան գազատարը։ «ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ պատերազմը ԹՐԻՓՓ նախագիծը Իրանի տեսանկյունից հավանաբար շատ ավելի վիճելի կդարձնի, չնայած դա ավտոմատ կերպով չի դադարեցնի նախաձեռնությունը»,- BBC-ին ասել է Միջազգային ճգնաժամային խմբի փորձագետ **Կոնուլ դե Մորը**։ «Եթե նախագծի իրականացումը հետաձգվի կամ չեղարկվի, դա կարող է բարդացնել Բաքվի եւ Երեւանի միջեւ խաղաղության գործընթացը»։

Իրանական սահմանի մոտ ամերիկյան ներկայությունը մեծացնելու փորձերը ապագա երթուղին կվերածեն «Թրամփի վարձկանների գերեզմանոցի», 2025 թ. օգոստոսին սպառնացել է մարտին սպանված Իրանի գերագույն առաջնորդ **Ալի Խամենեիի** խորհրդական **Ալի Աքբար Վելայաթին**։ Բայց հայ դիվանագետներն իրանցի գործընկերներին վստահեցրել են, որ նախագիծը որեւէ սպառնալիք չի ներկայացնում նրանց երկրի համար, եւ այս հարցում դրական տեղաշարժեր են եղել, ասում է Երեւանում գտնվող Ժողովրդավարության եւ անվտանգության տարածաշրջանային կենտրոնի տնօրեն **Տիգրան Գրիգորյանը**։ Այժմ հարկ է սպասել, որ Թեհրանի դիրքորոշումն ավելի անզիջում կդառնա,- նշում է նա,- բայց դա չի նշանակում, թե երթուղին չի իրականացվի։ «Հարցն այն է, թե ինչ միջոցներ ունի Իրանն այս նախագծի իրականացմանը խոչընդոտելու համար։ Կարծում եմ՝ ամեն ինչ կսահմանափակվի քաղաքական հայտարարություններով»,- ավելացնում է Գրիգորյանը։

Այնուամենայնիվ, եթե ԹՐԻՓՓ-ի շինարարությունը հետաձգվի կամ ընդհանրապես չեղարկվի, դա լուրջ հետեւանքներ կունենա Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացի համար, նշում է Միջազգային ճգնաժամային խմբի Հարավային Կովկասի ավագ վերլուծաբան **Զոշուա Կուչերան**։ ԱՄՆ-ի եւ Իսրայելի պատերազմը Իրանի հետ միայն մեծացրել է Ադրբեջանի համար Հայաստանով ճանապարհի կարիքը, նշում է փորձագետը։ Իրանի միջով առեւտուրը խափանվել է, իսկ Նախիջեւանի օդանավակայանը ժամանակավորապես փակվել է իրանական անօդաչու թռչող սարքի հարվածից հետո։

Ռուսական «**Մոսկովսկի կոմսոմոլեց**»-ը, վկայակոչելով վարչապետ **Փաշինյանի** պնդումն առ այն, որ «Թրամփի ուղու» նախագիծը Հայաստանի կառավարության «Խաղաղության խաչմերուկ» ծրագրի մի մասն է, գրում է, թե իրականում այն ԱՄՆ Պետդեպարտամենտի նախկին աշխատակից **Պոլ Գոբլի** դեռ 1992 թվականին առաջարկած հին ամերիկյան նախագիծն է։ Միայն թե՝ լրջորեն շտկված ու մկրատված՝ ոչ Հայաստանի օգտին։ Սկզբում ամերիկացիներն առաջարկում էին տարածքային փոխանակում. Բաքուն ստանալու էր «Զանգեզուրի միջանցք» (այժմ՝ ԹՐԻՓՓ)՝ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ գտնվող Լաչինի միջանցքի դիմաց։ Այդ ժամանակ Հայաստանը մերժեց այդ ծրագիրը, քանի որ կկորցներ Իրանի հետ իր սահմանը։ Մինչդեռ Բաքուն դժգոհ էր, որ ծրագիրը կամրագրեր Ղարաբաղի դուրս գալը իր իրավասությունից։ Սակայն ԱՄՆ-ը համառորեն այս նախագիծը, տարբեր փոփոխություններով, դնում էր բանակցությունների սեղանին։ Մինչեւ որ, «Փաշինյանի աղոթքների շնորհիվ» Լաչինի միջանցքի եւ հենց Ղարաբաղի հարցը հանվեց օրակարգից եւ Բաքվին հարկավոր, Հայաստանի տարածքով տրանսպորտային «միջանցքը» հանձնվեց երրորդ կողմի հսկողությանը։

ԹՐԻՓՓ-ը կդառնա Եվրոպան Չինաստանի եւ Կենտրոնական Ասիայի հետ կապող այլընտրանքային տրանսպորտային միջանցք՝ շրջանցելով Ռուսաստանը եւ Իրանը։ ԱՄՆ-ը կստանա ուղիղ մուտք դեպի Իրանի սահման։ Եվ Ռուսաստանի շուրջը վերջնականորեն կփակվի «ոչ բարեկամ պետությունների» օղակը, բանաձեւում է լրատվամիջոցը։

Ռուսական «**Կավկազսկի ուզել**» կայքը, անդրադառնալով Հայաստանի համար Իրանի պատերազմի հնարավոր վտանգներին, հայաստանցի փորձագետներից բերում է մասնավորապես՝ իրանագետ **Վարդան Ոսկանյանի** հետեւյալ միտքը. «Եթե, Աստված մի արասցե, պատերազմի արդյունքում Իրանում հաստատվի ԱՄՆ խամաճիկ կառավարություն, այս երթուղին կարող է կորցնել իր արդիականությունը Վաշինգտոնի համար, քանի որ, պատկերավոր ասած, Իրանի ամբողջ տարածքը կդառնա ԹՐԻՓՓ։ Այդ դեպքում Սյունիքով անցնող ճանապարհը հարկավոր կլինի միայն Բաքվին եւ Անկարային՝ Նախիջեւանի միջոցով միմյանց միջեւ կապ հաստատելու համար, ընդմին արդեն առանց իրանական զսպող ներկայության»։

Հուսանք, որ այս հոռետեսական սցենարը համենայն դեպս իրականություն չի դառնա։

«Իրանում պատերազմը լայնածավալ տարածաշրջանային պատերազմ է, որն ակնհայտորեն ցույց է տալիս, թե ինչպիսին է աշխարհը, որտեղ չկա միջազգային իրավունք եւ ամեն ինչ որոշվում է բիրտ ուժով»,- հրապարակման մեջ նշում է քաղաքագետ **Արթուր Խաչիկյանը**։ Նրա խոսքով, «Հայաստանի կառավարությունը պետք է լրջորեն գնահատի Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակը, բոլոր հնարավոր սցենարները եւ մտածի դրանց լուծումներ, այլ ոչ թե զբաղվի էժանագին ռեալիթի շոուներով»։

# Ոչ եւս է արուեստագէտներ յայտնաբերող եւ իր հայութեամբ հպարտ՝ Թորոս Սիրանոսեանը



Չորեքշաբթի 11 մարտ 2026-ին Պէյրութի մէջ իր մահկանացուն կնքած է Լիբանանի եւ արաբական աշխարհի արուեստի մարզին մէջ հանրածանօթ անուն մը՝ **Թորոս Սիրանոսեանը**, որ հակառակ օտար շրջանակներու մէջ իր աշխատանքին պարտադրած սովորութեան, ուր նման համբաւի անձեր փորձութիւնը կ ունենան փոխելու կամ դիւրացնելու իրենց անունը կամ մականունը, Թորոս Սիրանոսեանը կառչած մնացած էր իր անուան։ Երեւոյթ մը, որ հպարտութիւն կը պատճառէ իւրաքանչիւր հայու, երբ իր մականունին «եան» մասնիկը օտարալեզու լրատուական միջոցներէ կը լսած է։

Ծնած է Լիբանան։ Յաճախած է Պէյրութի Ecole Hoteliere ուսումնարանը, որմէ ետք ուսումը շարունակած է Զուիցերիոյ մէջ, ստանալով խոհարարապետի աստիճան եւ համապատասխան վկայական տեղւոյն՝ Ecole Hoteliere-էն։ Վերադառնալով Լիբանան՝ ստեղծած է իր EPI CLUB գիշերային բարձրամակարդակ ակումբը, Պէյրութի Ֆենիսիա փողոցին վրայ։ Նշեալ ակումբը գործած է 1961-1976 թուականներուն, փակուած քաղաքացիական պատերազմին պատճառով։

EPI Club -ի մէջ ելոյթ ունենալու համար համար Թորոս Սիրանոսեան հրաւիրած է բազմաթիւ երգիչներ, տարբեր երկիրներէ, որոնցմէ շատեր, այդ իսկ ակումբին շնորհիւ, հասած են իրենց հանրահռչակման, ինչպէս՝ Ասամօ եւ Էնրիքօ Քոմասեաս։ 1970-ին բացած է DEIR EL KALAA փառատօնը՝ աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնաւուրի հետ։

1971-ին, Սիրանոսեան՝ համաշխարհային երգիչ Ժիլպէր Պեքոյի հետ՝ սկիզբ դրած է JBEIL CASTLE միջազգային փառատօնին, որուն համար յաճախ հրաւիրած է մեծ երգիչներ, ինչպէս՝ Շառլ Ազնաւուր, Խուլիօ Իկլեսիաս, Տալիտա, Ժիլպէր Պեքօ, Տեմիս Ռուսոս, Շըռլի Պասսի, Սամանթա Ֆոքս, Միրէյ Մաթիօ եւ այլք։ Հրաւիրած է նաեւ նշանաւոր ներկայացումներ եւ միջազգային ճանաչում ունեցող խումբեր։ Լիբանանեան քաղաքացիական պատերազմին տարիներուն, երբ մշակութային կեանքը կանգ առած էր երկրին մէջ, Սիրանոսեան իր արուեստի ձեռնարկները ներկայացուցած է տարբեր երկիրներու մէջ, ինչպէս՝ Սուրիոյ, Յորդանանի, Իրաքի, Իրանի, Քուէյթի, Արաբական Էմիրութիւններու եւ Եգիպտոսի մէջ։

Տարբեր երկիրներու մէջ Սիրանոսեան ներկայացուցած է նշանաւոր Լիբանանցի երգիչներ, որոնց ցանկին մէջ՝ երգարուեստի լիբանանցի մեծութիւններ՝ ինչպէս՝ Ֆէյրուզը, Սապահը, Մաժիտա Էլ Ռումին, Ուատիի էլ Սաֆին, Սամիրա Թուֆիքը եւ ուրիշներ։ 1987-ին Սիրանոսեան Լիբանանի մէջ ստեղծած է LA MAISON DE L ARTISTE LIBANAIS (Արուեստագէտներու տունը) գործակալութիւնը, որուն բացումը կատարուած է Լիբանանի այդ ժամանակի նախագահ Ամին Ժեմայէլի հովանաւորութեամբ։

Սիրանոսեան իր երկրային կեանքին ընթացքին յանձն առած է ծառայել լիբանանեան արուեստին եւ մշակութային կեանքին, ինչպէս նաեւ լիբանանցի արուեստագէտներուն՝ մինչեւ իր կեանքին աւարտը, յոյս ունենալով, որ իր գործը շարունակողներ պիտի ըլլան դեռ շատ երկար ժամանակ։

***

ՀՀ Սփիւռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբեանը տեսած էր նախարարութեան՝ «Ուիլիըմ Սարոյեան» մետալով պարգեւատրել Թորոս Սիրանոսեանը։

Լիբանանի եւ արաբական աշխարհի մէջ բազմաթիւ անգամներ մրցանակներ ու մետալներ ստացած մարդուն, մահազդին, այսօր կ՚ընկերակցի ՀՀ Սփիւռքի նախարարէն ստացած մետալով իր նկարը, զոր ստանալէն մինչեւ իր կեանքին վերջը իր հպարտութեան եւ զինք իր ազգութեան կապող կարեւոր խորհրդանիշը հանդիսացած է։

**ՍԵՒԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ**
**Գլխ. խմբագիր Բեյրութի «Զարթօնք» օրաթերթի**
**(Հոդվածը տպագրվում է զգալի համառոտումներով)։**

# Զախորդ օրերը... մնացյալն իմքներդ նշեք

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Օր չի լինի, ոմանց բնորոշմամբ՝ ժամ չի լինի, որ հայաստանաբնակների որոշից որոշակի հատվածը հայաստանյան միջավայրի շուրջ մտորումների ու մտահոգությունների առումներով հարցերի ու խնդիրների թեմաներով չզրուցի հարեւանի ու բարեկամի հետ: Այստեղ գրեթե կապ չունի զրուցակիցների տարիքն ու կրթական ցենզը, ամուրի է թե ընտանիքի տեր, գործազուրկ է թե աշխատանք ունի, եւ այսպես շարունակ: Այնպես որ, անգամ տարօրինակ չէ, որ այս վիճակում հայտնվում է նաեւ ՀՀ գործադիր մարմնի, նույնն է թե՝ երկրի կառավարության ղեկավարը: Ասենք, օրերս նիստերից մեկում զրույց բացեց առ այն, ըստ որի ՀՀ քաղաքացիները նշում են, որ վերջին շրջանում իրենք անվճար վիրահատության են ենթարկվում: Այս մասին զրույցն սկսեց հաջորդ գաղտնաբառը բացելու նպատակով, որն էր՝ անվճար կյանքում ոչինչ չի լինում, վիրահատության դիմաց վճարում է ՀՀ կառավարությունը: Եվ հարցը՝ որտեղից այդ կառավարություն կոչվածի մոտ այդ միլիոնավոր ու միլիարդավոր դրամները, հնչում է ինքնաբերաբար:

Պարզից էլ պարզ է, որ այդ գումարները կառավարության նիստերին մասնակցող 500000 դրամից մինչեւ 2000000 դրամ ստացող այրերն իրենց հոր տնից չեն բերում, ինչպես նկատում են վարչապետս հռչակված առնվազն 2500000 աշխատանքային տարիքի մնացյալ ներկայացուցիչները:




Քավ լիցի, քանզի նրանք անգամ միլիոնավոր դրամներ կազմող պարգեւատրումներն են քիչ համարում. տվեք ու տվեք, որտեղից եւ ինչի դիմաց, դա իրենց չի անհանգստացնում, իրենք տնից աշխատավայր ու հակառակ ուղղությամբ շարժվող մարդիկ չեն, այլ... առանձնահատուկ ընդունակություններով օժտված անհատականություններ: Միայն պարզ չէ ինչու այդ օժտվածությունը չի երեւում, ասենք՝ դեղատներում, ուր տարեցները, որոնց ոսկորները կալցիումի կարիք ունեն, Դ-3 դեղահաբի 4200 դրամ վճարի ընթացքում 711 դրամ հարկ են վճարում: Եթե Աստծո յուրաքանչյուր օր հանրապետության հազարավոր դեղատներից ընդամենը մեկ հազարում նշված դեղատուփ վաճառվի, ստացվում է 711 հազար դրամ մուծված հարկ: Դե եթե Ա-ն ասել ենք, պարտավոր ենք նաեւ Բ-ն ասել, տարվա արդյունքներով ստացվում է 260.000.000 դրամ հարկ: Այն լուռ ու մունջ վճարում են մեր համեստ ու կարգապահ քաղաքացիները, ովքեր անգամ մասամբ վստահելով մամուլի միջոցներին՝ հարցնում են, թե ինչու են դեղամիջոցներն առավել մատչելի հարեւան Վրաստանում, ուր, ի դեպ, կենսաթոշակները զգալի բարձր են ՀՀ-ի համեմատ: Հարավային հարեւանի մոտ այն 500 դոլարի են հասցնում, երբ մերն անգամ 120 դոլար չի կազմում:

Հայաստանի հանրապետությունում հարց է, թե տնտեսավարման ի՞նչ սկզբունքով են առաջնորդվում արդեն հիշատակված դեղատնային բիզնեսի ներկայացուցիչները: Ընդգծված ուրվագծվում է, որ դեղատները բնակավայրերի որոշ հատվածներում միմյանցից 20-25 մետրեր հեռավորության վրա են բացվում եւ ամենեւին արդարացված չեն այն մոտեցումները, թե կողք կողքի տեղադրվող այս օբյեկտները մրցակցային միջավայր են ստեղծում: Դրանց իրական տերերը առողջապահության ոլորտի նախկին ու ներկա պաշտոնյաներ են, ուր մուտք ունեն նաեւ իրավապահներն ու հարկա-մաքսային նրբությունների տիրապետողները, նաեւ՝ տեղական կառույցների պաշտոնյաները:

Օրերս խոսվեց ՀՀ առողջապահության նախարարուհու շրջապատի հետ կապված դեղագործական գործունեությունից, որի առկայության պայմաններում դժվար է սպասել, թե ինչ հարց կինչի ՀՀ-ում առկա սննդի որակի առումով: Թող որ սիրողական մակարդակով այսուհանդերձ հնչեցնենք ի՞նչ բաղադրություն ունի ներկայացվող արհեստական թաղանթով նրբերշիկը, որն առաջարկվում է կիլոգրամը 995 դրամով, այն պարագայում, երբ 1 մետր աջ ու ձախ ցուցադրվող մսի կիլոգրամի գինը նվազագույնը 3500 դրամ է: Կամ ինչքանով է տեղին «կաթ պարունակող մթերք» պիտակով սննդի, տվյալ պարագայում խտացրած անվանումով կաթնամթերքի ներմուծումը, որը էապես ցածր գնով է վաճառվում եւ օգտագործվում փոքրերի ու մեծերի կողմից եւ բազմաբնույթ հրուշակեղեններում: Տարիներ առաջ այս կաթնամթերքն արտադրվում էր ՀՀ-ում, որը վերացավ երկրում պահվող կովերի գլխաքանակի վերջին տարիների կտրուկ նվազման հետ՝ 320 հազարից 200 հազարի: Հարցը մտահոգություն չէր առաջացնի, եթե պահվող կովերի մոտ կաթնատվության աճ գրանցվեր ավաղ, ինչպես շատ այլ ոլորտներում:

Ասենք՝ էլեկտրալամպերի արտադրությունում, որոնց խնայողական արտադրատեսակները հարյուր հազարավոր խմբաքանակներով ներկրվում են ու նաեւ փոխարինվում: Հարցը, թե ինչու դրանց արտադրությունը չի կազմակերպվում Երեւանի երբեմնի էլեկտրալամպերի գործարանի հիմքի վրա, մեկ անգամ չէ, որ բարձրացվել է: Թբիլիսյան փողոցի երկայնքով ձգվող սույն արտադրական հզորությունը մասամբ կանգուն է, տնօրենից մինչեւ պահակ գործի մեջ են, մասնաշենքերը կանգուն են, էլհոսանքն ու ջուրը միացված, պահպանման այլ ծախսերը պետության հոգածության ներքո, իսկ պետությունն այս ամենի արդյունքում միայն վնասներ է արձանագրում: Ինչո՞ւ, պարոնայք տնտեսության պատասխանատուներ, չէ՞ որ ձեր իշխանության 9-րդ տարին է մոտենում, այս տարիներին բանկերում ներդրված ավանդները 20 մլրդ դոլարի են հասել, որից ավանդատուները կարող էին բաժնետոմսերի տեր դառնալ, երբեմնի լամպագործներն էլ աշխատանք կունենային: Ի՞նչ անուն տալ այս վիճակին, որի պատասխանատուները թե՛ էկոնոմիկայի նախարարությունն է, թե՛ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության ու այլ պետական կառույցները:

Սակայն ո՛ւմ ի՞նչ ենք ասում, որտեղ ինքնագովքն է գերակայում, թվերով ու տոկոսներով պարծենալն է նախապատվելի դիտարկվում: Ահա մեզ ու ձեզ ՀՀ տնտեսություն կոչվածը, իր 30 մլրդ դոլար ՀՆԱ-ով, երբ 12 մլն բնակչությամբ Էստոնիան 62 մլրդ դոլար ՀՆԱ ունի:

Ինչպե՞ս չհիշենք «Զախորդ օրերը...». է, է, է, է...

17.03.2026թ.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# Հայաստանում գրանցված է շաքարային դիաբետով 62 հազար հիվանդ



*ՀՀ առողջապահության նախարարության (ԱՆ) վիճակագրական տվյալների համաձայն, վերջին երեք տարում Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում հինգ տոկոսով աճել է շաքարային դիաբետ ունեցողների թիվը:*

*ՀՀ -ում հաշվառված է ավելի քան 62.000 շաքարային դիաբետով հիվանդ, որոնցից մոտ 7000-ը՝ ինսուլինակախյալ, իսկ ավելի քան 55 հազարը՝ դեղորայքով ապրողներ: Նշված հիվանդության ցուցանիշները Երեւանի չափահաս բնակչության մեջ այսօր անցնում է 40 տոկոսը՝ գերազանցելով եվրոպական որոշ երկրների ցուցանիշները: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալներով, ամբողջ աշխարհում շուրջ 800 մլն մարդ տառապում է այդ հիվանդությամբ: Եվ, ըստ կանխատեսումների, մինչեւ 2030 թ. այդ ցուցանիշը կկրկնապատկվի:*

*Հետազոտություններն ու բուժման մեթոդների վերլուծությունը ցույց են տվել, որ վերոհիշյալ հիվանդությունները կանխավ հայտնաբերելու, դրանց հետ կապված բարդությունները կանխելու-նվազեցնելու համար անհրաժեշտ է բարձրացնել բնակչության իրազեկումը: Այդ ուղղությամբ, բացի կանխարգելիչ միջոցառումներից ու սքրինինգային ծրագրերից բացի, 2007 թվականի Դիաբետի դեմ պայքարի համաշխարհային օրվանից (նոյեմբերի 14-ին)՝ ՄԱԿ-ի հովանու ներքո անցկացվում են քարոզարշավներ եւ իրազեկման միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են բարձրացնելու բնակչության զգոնությունն ու տեղեկացվածությունը՝ շաքարային դիաբետի եւ դրա բարդությունների վերաբերյալ:*

*Բացի դրանից, ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել է առողջ ապրելակերպի հայեցակարգի նախագիծ, որտեղ մեծ տեղ է հատկացված շաքարային դիաբետի առաջացմանը նպաստող գործոնների կանխմանը:*

**-Որո՞նք են շաքարախտի կամ դիաբետի առաջացման հիմնական պատճառները: Այս հարցով դիմեցինք թիվ 20 պոլիկլինիկայի ներզատաբան (էնդոկրինոլոգ) Ջուլիետա Ղուկասյանին:**

- Շաքարային դիաբետի առաջացման պատճառները բազմագործոնային են: Դրանք հիմնականում բաժանվում են՝ առաջին տիպի (աուտոիմուն) եւ երկրորդ տիպի (նյութափոխանակային) տեսակների: Առաջին տիպը պայմանավորված է ինսուլին արտադրող բջիջների ոչնչացմամբ, իսկ երկրորդ տիպը՝ ինսուլինի նկատմամբ կայունությամբ, որը սերտորեն կապված է ճարպակալման, նստակյաց կյանքի եւ գենետիկական գործոնների հետ:

**-Որո՞նք են շաքարային դիաբետի ախտանշանները:**

-Շաքարային դիաբետի հիմնական կլինիկական ախտանշանները, որոնց ինտենսիվությունը կախված է օրգանիզմում ինսուլինի արտադրության աստիճանից, արտահայտվում է բերանի եւ մաշկային ծածկույթների չորությամբ, ուժեղ ծարավի զգացումով, հաճախամիզությամբ, քաշի կորստով, մկանային ախտահարումներով, արյան մեջ եղած մեծաքանակ խոլեստերինով, տեսողական խանգարումներով, եւ այլն: Այս նշանների առկայության դեպքում յուրաքանչյուր ոք պետք է դիմի տեղամասային պոլիկլինիկա՝ բժշկի նշանակմամբ լաբորատոր հետազոտության՝ գլյուկոզայի մակարդակն արյան մեջ որոշելու նպատակով:

Կա երկու տիպի շաքարային դիաբետ: Առաջին կարգի շաքարային դիաբետը ժառանգական նախատրամադրվածությամբ հիվանդություն է, որն ի հայտ է գալիս առավելապես երեխաների եւ երիտասարդների մոտ արտաքին միջավայրի տրիգերների ազդեցության ներքո, իսկ երկրորդը ՝ հիմնականում մեծահասակների շրջանում:

Նշեմ, որ շաքարախտը երեխաների մոտ հանդիպող ամենատարածված խրոնիկ հիվանդություններից է: (Դիաբետի միջազգային կոմիտեի տվյալներով՝ աշխարհում տարեկան մինչեւ 15 տարեկան շուրջ 70 հազար երեխայի մոտ ախտորոշվել է առաջին կարգի դիաբետ՝օդ տիպ 1):

Նշեմ նաեւ, որ դիաբետը ժառանգաբար փոխանցվող հիվանդություն է, որին նպաստում է նաեւ ժառանգական գործոնը: Եթե ծնողներից մեկն է հիվանդ, ապա դիաբետի փոխացման առաջացման վտանգը կազմում է 30-50 տոկոս, եթե երկուսը՝ ապա ժառանգական նախատրամադրվածության գործոնի հավանականությունը էապես մեծանում է:

**-Ճի՞շտ է որ հիվանդությանը նպաստում է նաեւ արյան մեջ յոդի քանակի անբավարարությանը, որն արտահայտվում է նաեւ վահանաձեւ գեղձի հիվանդությունների զարգացմամբ, եւ որոնք վերջին տարիներին կարծես թե շատացել են: Այն պայմանավորված է միայն յոդի անբավարարությա՞մբ, թե՞ կան այլ գործոններ, որոնք նպաստում են հիվանդությունների այս խմբի զարգացմանը:**

⇨8

## Իմաստաբանական բառարան

### Սրտի հայկական չափումները



Հայերս երկու տեսակ... սիրտ ունենք: Առաջինը կլինիկական սիրտն է, որը գտնվում է մարդու կրծքավանդակի միջնամասում եւ ապահովում է օրգանիզմի կենսագործունեությունը: Սակայն այս սիրտը ազգայինի հետ կապ չունի:

Մյուսը, որը պայմանականորեն կարելի է կոչել ազգային սիրտ, ավելի շատ ծնվում է հայկական հուզաշխարհից:

Կլինիկական սիրտը հոմանիշներ գրեթե չունի, մինչդեռ հայկական սիրտը՝ որքան ուզես: «Սիրտ» բառը կարող է նշանակել զգացմունք, գութ, սեր, տրամադրություն, ոգեւորություն: Այն նաեւ նշանակում է խրախուսանք, եռանդ, քաջալերանք, անվեհերություն... Այստեղ արդեն խոսքը հայի ազգային սրտի մասին է:

Հայի ազգային սիրտը խիստ խոցելի է. այն կարող է ճաքել, կոտրվել, տրաքել, նույնիսկ պայթել: Այդ խոցելիությունը հիշելիս անհնար է չմտաբերել հայ նշանավոր բանաստեղծ **Պետրոս Դուրյանի** տողը.

*«Սիրտս այնքան խոց ունի բյուր»:*

Հայկական սիրտը նաեւ թափառելու հատկություն ունի: Հենց այդ հատկությունն էր նկատի ունեցել **Վիլյամ Սարոյանը**, երբ Հայկական լեռնաշխարհից հեռու՝ Ֆրեզնո քաղաքում ապրելով, ասում էր, որ իր «սիրտը լեռներում է»:

Հայկական սրտի այդ թափառական բնույթն էր նկատել նաեւ սյունեցի տաղերգու **Համո Սահյանը**՝ գրելով.

*«Սիրտս գնաց, բարձունքից բարձունք ընկավ...»:*

Հայկական սիրտը կարող է նաեւ անմար կրակներ վառել: Այդ փաստն էլ արձանագրել է **Եղիշե Չարենցը:**

Չարենցի վառ երեւակայությունը թույլ է տվել նաեւ սրտի թրթիռը համեմատել թավջութակի ձգված լարի ելեւէջի հետ.

*«Որպես լրված թավջութակի ձգված մի լար՝*

*Դողում է սիրտս կարոտով մի ահարկու»:*

Հայկական սիրտը ենթակա է նաեւ գնահատման: Այդ յուրատեսակ սանդղակում ամենաթանկ սիրտը մոր սիրտն է: Այդ ճշմարտության լավագույն վկայություններից է **Ավետիք Իսահակյանի** հայտնի ավանդավեպը՝ Մոր սիրտը:

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

## Արտավազդ Սահակյան. հիշատակի երեկո եւ բարձրագույն պարգեւ



Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ հայականավոր վիրաբույժ **Արտավազդ Սահակյանի** հուշ-երեկոն:

Հայաստանի Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչությունը, 2025 թվականի նոյեմբերի 21-ին որոշում էր կայացրել՝ ականավոր բժիշկ Արտավազդ Սահակյանին շնորհել «Ադամանդակուռ Արարատ»շքանշանը:

Ցավոք, Արտավազդ Սահակյանը մահացավ:

Թեքեյան մշակութային միության «Ադամանդակուռ Արարատ» շքանշանը հանձնվեց նրա որդուն՝ բժիշկ Արամ Սահակյանին:

Արտավազդ Սահակյանին կարելի է ասել ամբողջ Հայաստանն էր ճանաչում: Նրան միշտ սպասում էին նաեւ Սփյուռքում, Արցախում:

Նրա հետ Արցախի հեռուստատեսության վերջին հարցազրույցը հետադարձ հայացք է անցյալին՝ ինչպես կատարեց առաջին փոխպատվաստումը, ինչպես էր նա երազում դառնալ ճարտարապետ, բայց դարձավ մարմնի ճարտարապետ, ինչպես է 1990-ականներին կազմակերպել Մեղրիի, Նոյեմբերյանի, Երասխի մարտերում վիրավորված մեր տղաների տարհանումն ու բուժումը, ինչպես է դիվանագիտական առաքելություն իրականացրել, մեկնել Արցախ, պատանդառվել, կազմակերպչական կարեւոր խնդիրներ լուծել, Արցախում եւս բուժել մարդկանց, կյանք պարգեւել:

Արտավազդ Սահակյանը 7 գյուտի հեղինակ է: Ամենաանհավանական վիրահատություններ է արել ոչ միայն Հայաստանում, այլեւ օտար երկրներում: Նա գիտնական էր, օժտված բժիշկ, որի համար իր Հայրենիքը, ժողովուրդը բացարձակ արժեք էին:

Արտավազդ Սահակյանը իրական լեգենդ էր, ֆենոմեն, մարդ-հանրագիտարան. նրան ճանաչելը մեծագույն պատիվ է: Ասում են բժիշկները, ճարտարապետները, լրագրողները, արվեստագետները, բոլորը: Նրանք հուշեր են պատմում ամենաուժեղ մարդու ամենափխրուն զգացումներից: Ու թվում է՝ Արտավազդ Սահակյանը իր մեջ ամփոփել է ամբողջ Հայաստանը, ամբողջ հայությանը ու նրա ցավը: Այդ ցավն էլ նրան տարավ՝ մեզ թողնելով իր անժամանակ հեռացումի մեծ ցավը:



ԹՄՄ Մամուլի գրասենյակ

## Հայաստանում գրանցված է շաքարային դիաբետով 62 հազար հիվանդ

⇨7 -Թեեւ Հայաստանը, կերակրի աղի յոդացման շնորհիվ, 2006 թվականից ի վեր դադարել է յոդի անբավարարության շրջան լինելուց, սակայն վահանաձեւ գեղձի հիվանդությունները շատ տարածված են՝ ինչպես մեր երկրում, այնպես էլ՝ ողջ աշխարհում: Վահանաձեւ գեղձի հիվանդությունների զարգացման հարցում կրկին մեծ է գենետիկ գործոնների դերը, իհարկե, չի կարելի բացառել նաեւ շրջակա միջավայրի բազմաթիվ գործոնների ազդեցությունը: Այս հիվանդություններով հիվանդացության աճը կարող է պայմանավորված լինել նաեւ 21-րդ դարում ուլտրաձայնային հետազոտությունների լայն կիրառման շնորհիվ՝ դրանց առավել վաղ հայտնաբերմամբ եւ ախտորոշմամբ:

**- Ինչպե՞ս հասկանալ, որ հնարավոր է՝ կա վահանաձեւ գեղձի խնդիր:**

- Վահանաձեւ գեղձի խնդիրներով անձինք կարող են ունենալ ոչ սպեցիֆիկ գանգատներ՝ խեղդողի զգացում, ընդհանուր թուլություն, քնկոտություն, սրտխփոց, մարմնի դող, մազաթափություն, դաշտանային ցիկլի խանգարումներ: Հաճախ, եթե գեղձի ֆունկցիան խանգարված չէ, հիվանդները կարող են որեւէ գանգատ չունենալ:

- Նշեմ, որ սպեցիֆիկ կլինիկական նշանների բացակայությունն առավել ընդգծում է հիվանդի առաջնային զննման կարեւորությունը բժշկի կողմից:

**-Վահանաձեւ գեղձի հանգույցներ առավել հաճախ հանդիպում են կանա՞նց, թե՞ տղամարդկանց մոտ:**

- Վահանաձեւ գեղձի բոլոր հիվանդությունները, այդ թվում՝ հանգույցները, կանանց «մենաշնորհն» են: Վերջինները հազվադեպ հանդիպում են նաեւ տղամարդկանց մոտ, ընդ որում՝ այս դեպքում բժիշկն առավել շրջահայաց (աչալուրջ) պետք է լինի հնարավոր ռիսկերը գնահատելիս:

**-Ո՞րն է դիաբետի բուժման հիմնական սկզբունքը:**

- Մեկընդմիշտ պետք է հիշել, որ դիաբետի բուժման հիմնական սկզբունքը դիետան է՝ բուժական ռեժիմին զուգահեռ ապրողջ սննդակարգին հետեւելը: Դիաբետիկ դիետան պետք է պարունակի բավարար քանակությամբ վիտամիններ, ածխաջրեր, հանքային աղեր: Այս հիվանդության դեպքում միմիայն ճիշտ դիետան կարող է ապահովել օրգանիզմի նորմալ էներգետիկ փոխանակություն: Դիաբետով հիվանդի սննդակարգը պետք է կազմվի անհատական մոտեցմամբ՝ հաշվի առնելով հիվանդի քաշը, տարիքը, ֆիզիկական ակտիվությունը, նիհարելու կամ գիրանալու հակվածությունը:

Դիետայի գլխավոր նպատակն է արյան մեջ գլյուկոզայի, ինչպես նաեւ ճարպերի եւ խոլեստերինի նորմաների պահպանումը: Պետք է ձգտել, որ դիետան լինի բազմազան եւ պարունակի անհրաժեշտ բոլոր սննդանյութերը՝ սպիտակուցներ, հանքային աղեր, վիտամիններ:

Անհրաժեշտ է նաեւ 40-ը լրանալուց հետո, տարին գոնե մեկ անգամ դիմել ներզատաբանին, ինչը հնարավորություն կտա ավելի վաղ հայտնաբերել եւ հեշտությամբ կանխել այդ հիվանդությունն ու դրա հետ կապված հետագա բարդությունները:

**- Կնշե՞ք այդ հիվանդությունից բխող մյուս վտանգները:**

- Դիաբետը տրտանոթային համակարգի խաթարումներ առաջ բերելուց բացի, շատ հաճախ դառնում է կուրության պատճառ: Ընդհանրապես, 25 տոկոսով կուրության պատճառը հենց դիաբետն է: Տեսողության կորստի հիմնական պատճառը դիաբետիկ ռետինոպաթիան է, որը աչքերի ծանր հիվանդություն է եւ դրսեւորվում է ցանցաթաղանթի ախտահարմամբ:

Դիաբետի հետեւանքով նաեւ երիկամային խնդիրներ են ի հայտ գալիս: Արյան մեջ բարձրանում է մնացորդային ազոտի մակարդակը, որը հետագայում հանգեցնում է երիկամային անբավարարության: Երբեմն դիաբետի հետեւանքով առաջանում են կենտրոնական եւ ծայրամասային նյարդային համակարգերի խանգարումներ, իսկ ավելի հաճախ տուժում են ստորին վերջույթները:

**- Ինչպիսի՞ մտահոգություններ ունեք կապված վերոնշյալ հիվանդության հետ:**

- Կուզեի, որ Հայաստանի բնակիչները հոգ տանեին իրենց շրջակա միջավայրի, ինչպես նաեւ հասարակական վայրերի մասին, որոնք շատ են ներազդում կյանքի որակի, կենցաղի վրա: Ինձ շատ է տխրեցնում, որ ոմանք ամենուրեք ու բոլոր վայրերում ծխում են: Անգամ գեսնանցումներից ծխախոտի հոտ է գալիս, եթե անգամ այդ պահին ոք չի ծխում: Ծխախոտի ծուխն ամենուրեք շատ է:

Հավելեմ նաեւ, որ շաքարախտով հիվանդ լինելու փաստը դատավճիռ չէ: Յուրաքանչյուր հիվանդ պետք է հետեւի բժշկի խորհուրդներին, ժամանակին ընդունի դեղորայքը, պարբերաբար ստուգի արյան մեջ գլյուկոզայի մակարդակը, առողջ կենսակերպ վարի՝ նախընտրելով ճիշտ սննդակարգ:

Այսինքն, ամեն ինչից զատ, մարդն առաջինն ինքը պետք է լինի իր բժիշկը: Նշեմ, որ այդ առնչությամբ պարբերաբար աշխատանք եմ տանում նաեւ հիվանդներիս հետ:

Հարցազրույցը՝
ՀԱՍՄԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԷՔԷՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն (գովազդ)
հեռ. 010 582960
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 19.03.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: